ԺԱ. ՏԱՐԻ 3159 | 19 ՕԳՈՍՏՈՍ 1894 | 29 ՍԷՖԷՐ 1312 | ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան կանխիկ վճար	150
» Վեցամսեայ » »	75
» [illegible] » »	40
Օտար երկիրներ Տարեկան վճար	56
» [illegible] »	28
Ընծիր [illegible] Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց [illegible] Ղրուշ	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

ԺԹ. ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ
ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ
ՄԵԾԱՆՈՒՆ ՎԵՀԱՊԵՏԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

Հանուրց Տաճկաստանեայց միլիոնաւոր ժողովրդոց համար երջանկաւէտ օր մ'է այսօր։ Բիւրք բիւրուց հաւատարիմ հպատակք մեծի Տէրութեանն Օսմանեան այսօր հրճուանօք կը տօնեն զբարեբաստիկ տարեդարձ փառաւոր Գահակալութեան Օգոստափառ Ինքնակալին ՎԵՀԱՓԱՌ ԱՊՏ-ԻՒԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆԻ։

Նշանաւոր շրջան մը բոլորած է Տաճկաստան, Ն. Կ. Վեհափառութեան գահակալութեան անուանի Թուականէն ի վեր, շրջան մը որ իւր հետքերը խորունկ կերպիւ պիտի դրոշմէ այս լայնածաւալ Տէրութեան սքանչելի Պատմութեան մէջ։

Այսչափ երեւելի շրջանի մը փայլով զմայլած, բնական է որ ազգք և ազինք՝ հաւատարիմ հպատակք՝ իրենց հիացումն արտայայտէին ակներեւ ցոյցերով։ Ուստի, այսօր, ամենուրեք լուսավառութիւնք, հրախաղութիւնք, նուագածութիւնք պիտի ըլլան իբրեւ յայտարար նշան այս կարեւոր Տարեդարձին թէ պաշտօնական և թէ անպաշտօն ակմբոց և ընդհանուր հասարակութեանց մէջ յառաջ բերած եռանդալից ցնծութեանց և խրախճանութեանց։ Ինչ մեծ փոփոխումներ Ն. Կ. Վեհափառութեան Նշանաւոր Գահակալութենէն ի վեր։ Շատ մը նկատմամբք հիմակ երկիրն ո՜րչափ յառաջադէմ բարելաւութեան ամենէն ուղիղ ճամբու մէջ է։ Ստուար հատորներ կարելի է գրել՝ մի առ մի յիշելու համար հանրօգուտ տնօրինութիւններն ու մեծ ձեռնարկութիւններն որք եղած են ընդ ուղղակի տնօրինութեամբ Ն. Կ. Վեհափառութեան, և որոցմէ շատեր այժմէն սքանչելապէս արդիւնաւորուած են յօգուտ և ի բարօրութիւն Տէրութեան։ Եւ ինչ խոստմնալից ձեռնարկութիւններ և մեծամեծ հաստատութիւններ ալ որք մօտաւոր ապագայի մէջ իրենց բազմապատիկ արդասաւորութիւնն առատօրէն կը խոստանան երկրին։ Ամենքս ալ գիտենք թէ այս ամեն տնօրինութիւնք որք կը վերաբերին երկրին ու Տէրութեան ներկային և ապագային՝ ուղղապէս Ն. Կ. Վեհափառութեան գործն են, որ գիշեր ցերեկ կ'աշխատի, կ'աշխատի, որ անդուլ կը հսկէ, և իւր հեռատեսութեան և իմաստութեան նշանները շատ բարեպատեհ և ցնծալի առիթներով ցուցած է ամենափայլուն կերպերով։

Օտարազգիք եւս զանազան քաղաքավար առիթներով յարգանօք յիշած են ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՀԱՄԻՏ ԿԱՅՍԵՐ ճարտար քաղաքագիտութեան, նուրբ դիւանագիտութեան, սքանչելի կենցաղագիտութեան ու փափուկ քաղաքավարութեան մեծամեծ բազմազան գեղեցիկ արդիւնքները։ Տէրութիւնն հիմակ անհամեմատ աւելի զօրեղ և ակնածելի վիճակի մէջ է բաղդատմամբ այն ժամանակին յորում Ն. Կ. Վեհափառութիւն ի Գահ բազմեցաւ. զի այն օրէն ի վեր Տէրութեան զօրութիւնն աւելցնել և զերքն ակնածելի ընել Իրեն սիրական զբաղում ընտրեց և անով պարապեցաւ օրն ի բուն։ Կրթական և տնտեսական զարգացմանց ճամբու մէջ եղածները մանաւանդ անմոռանալի են, և անմիջական կերպիւ զգալի են անոնց բարերար ազդեցութիւնք։ Գիտենք թէ Ն. Կ. Վեհափառութեան Բարեյաջող գահակալութենէն ի վեր երկրին այս երկու կարգի զարգացմանց համար դրամ չէ խնայուած. շատ տեղեր դպրոցներ բացուած են, կեցած դպրոցներ բարւոքուած են, երկաթուղիներ և հասարակ կառուղիներու ճամբաներ շինուած են, և զանազան հանրօգուտ և կարեւորագոյն տնօրինութիւնք եղած են և կ'ըլլան յարաժամ։ Կ. Պոլսոյ մեծ երկրաշարժէն աւերածեալներուն և այլ զանազան կարգի տառապեալներուն իւր բարենպատակ օգնութեամբ և գթութեամբ մեծանուն Ինքնակալը նաեւ բարեգութ Վեհապետի նախանձելի տիտղոսը ստացած է։

Ահա այս ուղղագոյն և փրկաւէտ ճամբու մէջ է երկրին և Տէրութեան գեղածիծաղ ապագայն, ինչպէս որ շատ լաւ կը հասկնայ Ն. Կ. Վեհափառութեան Նուրբ միտքն, և ինչպէս որ գործադրութիւնն ամեն վայրկեան կը տեսնենք։

Բնական է որ Իւր հնազանդ հպատակներն ուրախութեան մեծամեծ և չքնաղագոյն ցոյցերով տօնեն Իւր Գահակալութեան Տարեդարձն, այնպէս որ այս օրս նշանաւոր պիտի ըլլայ Իւր հանրային խրախճանութեան ցոյցերով, զորս պիտի փութանք մանրամասնել մեր վաղուան թուով։

Հետեւապէս, միլիոնաւոր հաւատարիմ հպատակք, առանց ո՛ և իցէ խտրութեան, միաբերան պիտի աղաղակեն ըսելով՝

ԿԵՑՑԷ, ՅԱՒԻՐԺ ԿԵՑՑԷ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍՐՆ
ԵՒ ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ
ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆ ՂԱԶԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ՎԱԿՆԷՐԻ ԵՐԳԱԽԱՂԵՐՆ Ի ՊԱՅՐԷՕԹ

Ամեն դպրոցի գլուխ ունի իւր հակառակորդները և ջատագովները։ Վակնէր ալ ունի իւր հակառակորդները եւ զարմացողները. առաջինները՝ երաժշտական արուեստին անհմուտ եղողներուն մէջ են ընդհանրապէս, իսկ երկրորդները՝ գիտունք և գրեթէ ամբողջ գերմանացիք են։ Այս վերջիններուն մէջ կան դաս մը զարմացողաց զորս Վակնէրամոլ կրնանք անուանել։ Ասոնք կը յայտարարեն թէ երաժշտապետին երգախաղերուն կատարելագոյն ներկայացումներն իսկ այն երկասիրութեանց արժանիքը ի յայտ ածելու անբաւական են և թէ այն երգախաղերը պէտք չէ ներկայացունել թատերասրահի մէջ, այլ պէտք է ընթեռնուլ զայնս, խորհիլ անոնց վրայ և յափշտակութեամբ նկատել մինչեւ որ միտքը՝ իբր երկնային ճաճանչով մը լուսաւորուած՝ հասու ըլլայ անոնց վսեմ գեղեցկութեան։ Դժբախտութիւն մ'է, կ'ըսեն, որ Վակնէր, մեր իմացողութեան տկարութիւնը և մեր ձայնասարք մը կարդալու անկարողութիւնը նկատելով, ստիպուեր է թոյլ տալ որ իւր երկասիրութիւնները ներկայացուին, փոխանակ ընծայելու զայնս մեր անխօս զարմացման՝ պարզ ընթերցմամբ։ Վակնէրամոլներու համար ականջը դեր չունի երաժշտութեան մէջ. իրենց համար՝ երաժշտութիւնը հասկընալու ու դատելու ենք աչքով միայն։

Գուցէ, կ'ըսէ Վակնէրական Հանդէսը, ոմանք կարդալով նուագարանական ձայնատետրը, կարող ըլլան երաժշտական արուամը տեսնելու և հասկնալու, ինչպէս որ ամեն մարդ կը տեսնէ ու կը հասկընայ, ընթերցմամբ միայն, գրական տաղը. ուստի նոյն անձինք պիտի վայելեն, գիրքը կարդալով, առանց ներկայացման խոչընդոտի, Վակնէրի մտաւորական թատերախաղերուն հմայիչ վսեմութիւնները,—ջինջ երեւոյթներ զոր չեն խառվեր թատերասրահներու դժնդակ կամ կեղծաւոր նիւթականութիւնները,—և երեւակայական աշխարհի մը կատարեալ ճշմարտութեան մէջ իրենց պիտի երեւայ նոյն երկասիրութեանց կրօնական իմաստը։ Գիրքը կ'ըլլայ յանժամ ներկայացման վայրը՝ ուր տեղի կունենայ հոգեբանական ու բնական դրամ մը։ Բայց ամբոխը, որ միշտ անտեղեակ է արուեստին, միշտ մտաւորապէս ծոյլ է, որ բիրտ կը մնայ՝ նախնական և գեղջկական դաստիարակութիւն մ'առած ըլլալով, չէ կրնար ընթերցմամբ միայն երգախաղերը հասկընալ, ուստի, ինչպէս որ տասը դար առաջ պէտք էր վիպասանութիւնները արտասանել ամբոխին, պէտք է որ մարդու և նուագարանաց ձայներ երգեն ու նուագեն որպէս զի հասկընայ նիւթական թատրոնի վերաբերեալ երկասիրութիւն մը։

Յիշեալ Հանդէսը, որ այսօրինակ անհեթեթ գաղափարաց մթերք է, ժամանակաւ հակառակեր էր Վակնէրի երկասիրութեանց ի Ֆրանսա տարածուելուն, թէպէտեւ ապա ի Փարիզ փառաւոր ներկայացում մը տրուեցաւ Պ. Լամուրէօյի նախաձեռնութեամբ։ Վակնէրամոլք որ վարպետին երգախաղերուն գերմաներէն լեզուաւ իսկ ներկայացուելէն կը գայթակղէին, սրբապղծութիւն կը համարէին անոնց օտար լեզուաց թարգմանութիւնը։

Այս խնդիրը վերստին երեւան ելաւ այս տարի ի Պայրէօյթ ուր ամեն տարի ներկայ եղանակիս մէջ Վակնէրի երկասիրութիւնները կը ներկայացուին տիկին Վակնէրի տնօրէնութեան ներքեւ որ նոյն նպատակի համար մասնաւոր երգիչներ պատրաստեր է։ Տիկին Վակնէրի շուրջը կային անձինք որ վերոյիշեալ գաղափարները ունէին. իրենց համար գուցէ նշանակութիւն չունենան նուազ կամ աւելի յաջող ներկայացմանք նոյն երգախաղերու որ դերասաններու և երգիչներու կարօտ չեն. բայց տիկին Վակնէր, որ Պայրէօյթի ներկայացմանց արժէքին տեղեակ է և գիտէ միանգամայն Բարիզու ներկայացմանց հաջողութիւնները, բնաւ պիտի չ'ընդունի. կ'ըսէ Ատօլֆ Ժիւլիէն քննադատը, որ իւր ամուսնոյն երկասիրութիւնները թատերաբեմերու վրայ երգուելու սահմանուած չըլլան. քաջ գիտէ թէ Վակնէր որչա՛փ կարեւորութիւն կուտար իւր գործոց տեսարանական ներկայացման, և Պայրէօյթի ներկայացմանց նպատակն է ցուցնել թէ ո՛ր աստիճան կատարելութեան կարելի է հասնիլ այս մասին։

Տիկին Վակնէր արտաքոյ կարգի տնօրէն, բռնաւոր յարդարիչ մ'է խաղուց տեսարանական մասերուն. սակայն պակասութիւն մ'ունի. որ կրնայ արդարացուիլ այսու թէ «ամեն տարի միեւնոյն նպատակի կը ծառայեն», ըստ Պայրէօյթի Թատրոնի առածին. այսինքն միշտ կ'ընտրէ միջին կարողութեան տէր երգիչներ, զորս ինքը պատրաստեր է և որք կը հայթայթեն թատերական անձանց ճշգրիտ տպաւորութիւնը. կը մերժէ աւելի գեղեցիկ ձայն ունեցողները, վասնզի ասոնք աւելի ինքնահաւան կը լլեն և նուազ կը համակերպին վակնէրական կանոնաց։ Բայց այս տարի, գուցէ վակնէրամոլներէ մղուելով, ընտրեց առաջին դերերը կատարելու յոյժ անբաւական բազում երգիչներ, և այս ընտրութիւնը զգալապէս նսեմացուց Պայրէօյթի ներկայացմանց փայլը։

Արդարեւ Պայրէօյթի թատրոնը յաճախողներու կարծիքն է որ եթէ այս տարի Թաննհօյզէրի ներկայացումը, — ի բաց առեալ երաժշտութիւնը, — մեծ յաջողութիւն ունեցաւ, այն ալ լոկ տեսարանական մասին կատարեալ կարգաւորութեան և խմբերգներուն հրաշալի համաձայնութեան շնորհիւ էր։ Խոստովանելու է թէ Բարսիֆալ, որ ի Պայրէօյթ հարիւրորդ ներկայացման կը մօտենայ, իւր առաջին փայլը պահեց, վասն զի խմբերգներու և նուագածուաց նկատմամբ թուլութիւն չպատահեցաւ, իսկ առաջին դերերը կատարող դուսանները անբաւական էին։ Բարսիֆալի ներկայացման մէջ ալ դարձեալ սոյն տկարացան, և խմբերգները ու երաժշտական ու թատերական տեսակէտով երգախաղին ընդհանուր ներկայացումը ապահովեց Բարսիֆալի փառաւոր յաջողութիւնը։

Բայց Լօհէնկրինի մէջ աւելի զգալի եղաւ առաջին դերերը կատարող բազում երգիչներու արժանեաց և թատերական ու խմբերգներու մասանց սքանչելի ուղղութեան տարբերութիւնը։ Հանդիսականք, կ'ըսէ ականատես մը, հիացմամբ տեսան թէ խմբերգի պատկանող դուսանները և անխօս դերասանները որչափ ճշդութեամբ և եռանդով կը կատարէին իրենց դերերը։ Պ. Վան Տիք (Լօհէնկրին) հիանալի կերպով կատարեց իւր դժուարին դերը և ունկընդիրք իրենց գոհունակութիւնը յայտնեցին բազում անգամ ծափահարելով ու զինքը թատերաբեմը բերելով, գուցէ ասով իմացունել կ'ուզէին թէ կը բողոքեն միջին կարողութիւն ունեցող երգիչներու ընտրութեան դէմ։

Յ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

ՀԵՏԻՈՏՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ուղեւորութիւններու եղանակն է, ոմանք երկաթուղի կը նստին, ուրիշներ իրենց հեծելանիւին վրայ կ'ելլան, ուրիշներ ալ ոտքով կ'երթան։ Ասոնք ճշմարիտ առանձնաշնորհեալներն են. մեր մինակ լիապէս կը ճաշակեն հաճոյք մը զոր արդի քաղաքակրթութեան յօրինած փոխադրութեան միջոցները չեն կրնար հայթայթել։ Մինչ դաշտերն ու լեռները, քաղաքներն ու գիւղերը՝ ճեպընթաց կառախումբի մը յորձանքէն ճեղքուելով կայծակի արագութեամբ կը փախչին առաջին կարգի վակոնի մը մէջ ընկողմանած ուղեւորի մը կիսախուփ աչքերէն, հետիոտնը ըստ հաճոյս կը դիտէ հրաշալիքները տեսարանի մը որ անդադար կը փոխուի և անսպառ կերպով կը պարզուի իր աչքերուն տակ։ Իրաւունք ունի [illegible] կենալու՝ սքանչանալու համար գեղանկարի մը շքեղութիւններուն վրայ, և հեծելանուորդին պէս դատապարտուած չէ իր բոլոր ուշադրութիւնն անդադար կեդրոնացունել ճամբուն սալարկին վրայ չխորտակելու համար իր հաւասարակշռութիւնը, հիմնապէս անկայուն, որ չի դիմանար կոշիճի մը ցնցումին։

Երանի անոնց որ ոտքով կ'երթան։ Վախ չունին կառախումբը փախցնելու. ստիպուած չեն իրենց ծրարները կապելու, տոմսակ առնելու, կես-երկաթուղային ծրարներու արձանագրութեան վրայ հսկելու և վազել ի վազ հետեւելու նամակաբաշխին որ առած է իրենց պայուսակը։ Այս տարօրինակ ու մշտագին հիւանդութիւն, թէ բարոյական և թէ ֆիզիքական, բոլորովին անծանօթ է իրենց։ Ուսերնին ամրապէս կապուած պարկ մը կը պարունակէ բոլոր իրենց պիտոյքները, եւ երբեք չեն բաժնուիր իրենց բեռէն։ Ձերծ են ամեն հոգէ, ազատ են բոլորովին։

* *

Ինչո՞ւ համար իր առանձնական կեանքին մէջ ամենէն երջանիկ մարդը այնքան դիւրութեամբ կ'որոշէ քանի մը շաբաթ հրաժարիլ նիւթական բարօրութենէն զոր կը վայելէ իր բնակարանին մէջ և գոգ մեքենական այն սովորութիւններէն որք այնքան մեծ տեղ մը կը բռնեն իր ամեն օրեայ կենցաղին մէջ։ Մեր բնաւորութեան այս [illegible] անհեթեթութեան պատճառը անկարելի չէ յայտնել։ Ամեն ատեն, անդիմադրելի պէտք մը կը զգանք մեր գաղափարները նորոգելու։ Պէտք է աչուընիս առջեւ ունենանք տեսարան մը որ անդադար փոփոխի և որ, հետեւապէս, առտուընէ մինչեւ իրիկուն մեր մէջ ծնուցանէ նոր զգայութիւններ։ Հետիոտն ուղեւորութիւն մը անպատմելի օգուտ ունի երեք օրուան մէջ մեզի ցուցնելու շատ աւելի բաներ քան տեղափոխութեան ուրիշ միջոցները երկու երեք շաբթուան մէջ։ Աղէկ մը ճանչնալու համար երկիր մը, պէտք է պտտիլ հոն պայուսակն ուսին վրայ։

Պ. Իօժէն Լամպ Ռիչարտս խորհուրդ կուտայ Սէնդիւրի Մակազինի ընթերցողներէն անոնց որք կուզեն այս կերպ մարզանքի հետեւիլ՝ հիմնապէս ուսումնասիրել տեղական պատմութիւնն այն երկրին ուր կուզեն հետիոտն ուղեւորութիւն մը կատարել։

Անցեալին դէպքերը յիշողութեան կը ներկայանան երբ յարութիւն առնեն այն շրջանակին մէջ ուր տեղի ունեցած են։ Մարդ մը որ կուզէ մոռնալ ներկայ ժամուն մտազբաղումները և մէկ քանի օր փոխադրուիլ ուրիշ դարու մը մէջ, չի կրնար երեւակայել ասկէց աւելի ապահով միջոց մը իր ժամանակակիցներուն հետ ունեցած կապերը խզելու և ջնջելու մտաւորական ու բարոյական մթնոլորտն անհետացած սերունդներու։ Տեղւոյ վրայ ի վեր հանուած պատմութիւնը կը դադրի առակ մը ըլլալէ ու իրականութիւն մը կը դառնայ։

Սակայն շրջուն պատմաբանի այս արհեստը բոլորովին մասնաւոր կոչում մը կը պահանջէ, եւ շատ հետիոտն ուղեւորներ պիտի վարանէին ճամբայ ելլելու եթէ ստիպուած ըլլային ձեռնարկելու այն նախապատրաստական ուսումնասիրութիւններուն զորս Սէնդիւրի Մակազինէ աշխատակիցը կը յանձնարարէ։

Հարկ չիկայ դարերու փոշին տարտղնել զգալու համար բարերար ազդեցութիւնները զորս երկարատեւ ճամբորդութիւն մը կունենայ մտաւորական չափազանց աշխատութենէ խոնջ ուղեղներու վրայ։ Այլազանութիւնն տեսարանի մը որ անդադար կը փոխուի՝ կը բաւէ հանգչեցնելու միտքը առանց յոգնութիւն պատճառելու։ Քիչ քիչ հանգիստը առաջ կուգայ, գաղափարները աւելի կը պայծառանան, աւելի կը ճշդուին և երեւակայութիւնը կը վերագտնէ իր առջի բեղմնաւորութիւնը։

Նիւ-Եորքի ամենէն կարեւոր թերթերէն մէկուն տնօրէնը երկար հետիոտն ուղեւորութեան մը ձեռնարկած էր՝ բուռն գրոհանքով մը ընդհատելու համար առօրեայ աշխատութիւն մը տարապայման որուն հետեւանքները աղիտաբեր կ'ըլլային իր առողջութեանը։ Շաբաթ մը անցունելէ ետք բաց օդին, մեծ ճամբաներուն վրայ, արեւուն և անձրեւին տակ, այս յանպատրաստից հետագնացը, որ գրիչը թողած էր ուղեւորի ցուպն առնելու համար, իր գրասեղանին առջեւ նստելով նորէն՝ կ'ըսէր Պ. Ռիչարտսի. «Հիմակ ինքզինքս կարող կը զգամ տասներեքը լրագիր վարելու»։

Մինակ միտքը չէ որ իր առաձգութիւնը կը վերստանայ՝ Ֆիզիքական մարզանքներու ամենէն բնականին ու ամենէն առողջարարին ազդեցութեանը տակ։ Քանի մը հարիւր քիլոմեթր հետի պտոյտ մը ամենէն հանդիսաւոր ու ամենէն չափչփուած բնաւորութիւններուն վրայ անակնկալ ազդեցութիւններ կ'ունենայ։

(Շարունակելի)

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (78)

ԺԻՒԼ ՄԱՌԻ
ՏԺԳՈՅՆ ԱՂՋԻԿԸ
ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ
ԷԿԻՅԵԼԹԻ ՀՕՐԸ

—Անկիւն մը պիտի փնտռենք... պիտի գտնենք... բայց երկար չը կենանք հոս... տուն դառնանք։

—Այո, տուն դառնանք... պէտք է որ ինքզինքս չօշափեմ ապահով ըլլալու համար որ քիթիս չէ՞ն խնդար...

—Եւ ես, իմ ծերուկ Ժաքթէնս, պէտք ունիմ դէմքդ տեսնալու, որպէսզի ըսես ինծի թէ խենդ չե՞մ...

Դէպի ճամբան բռնեցին։

Պանքնոտի տրցակները գրպանած էին, և կամաց կամաց քալեցին, ամեն վայրկեան չօշափելով թանկագին գանձը...

—Չըլլա՞յ կորսնցունենք։

—Այո, այո, զգուշանալու է...

Գործաւորներ անցան մութին մէջէն, հանք երթալով։

Երկու երեքը ճանչցան մեր երկու բարեկամները։

—Գաւաթ մը օղի կը խմե՞ք գինետունը։

—Ոչ, ոչ, ժամանակ չունինք։

—Օ՛հ, օ՛հ, ստիպողական գո՞րծ ունիք։

Պատասխան չտալով փութացին հեռանալ։

Եւ գինով Ժաքթէնն էր որ այն իրիկունը, մէկէնիմէկ խելաբերելով, ըսաւ Բերսիլարին.

—Ոչ, այս գիշեր խոհեմ ըլլալու է... մէկ գաւաթին ուրիշ մը կը յաջորդէ... Ես կը գինովնամ, դուն կը ծծկուիս... Եւ իմ գինովցած, քու գլտորած պահուդ, ո՞վ պիտի հսկէ մեր գանձին վրայ... վաղը ժամանակ կ'ունենանք լապտերները վառելու։

Ի Բրատ, իրենց սենեակը փակուեցան։

Պարապ շիշի մը վիզին մէջ տնկուած մոմի մը լոյսով իրենց հարստութիւնը դիտեցին։

Կը համրէին պանքնոտները, նորէն կը համրէին։

—Հաշիւը ճիշդ է։ Հարիւր հատ է։

Վերջապէս կը սկսէին հաւատալ այս բախտին իրականութեանը, հիմակ որ իրենց խցիկին մէջ ամրապէս փակուած, ա՛լ վախ չունէին գէշ հանդիպումներէ։

Սկսան խնդալ, իրարու նայելով։

—Ի՜նչ բախտ, ծերուկս, ի՜նչ բախտ։

—Մեր ծերութեանը հանգիստ պիտի ապրինք։

—Ըսէ նայիմ, ի՞նչ պիտի ընենք ասիկա...

—Չեմ գիտեր։ Գաղափար մը ունի՞ս։

—Դեռ ոչ։

—Չես կրնար երեւակայել թէ ստակն ի՜նչ ապշեցուցիչ բան է չարքաշներու համար։

—Եկամուտ կը դնենք, ու անով կ'ապրինք։

—Ամենէն խելացութիւնը ատ է... բայց փոքր գումարներով... Ամեն մարդ պիտի զարմանայ մեզի պէս խեղճ ողորմելիներուն ձեռքը տեսնելով այդքան խոշոր դրամագլուխ մը։

—Այո, այո... ըսաւ Բերսիլար... փոքր գումարներով... այնքան հաճոյք պիտի զգայի չը բաժնուելով այս թուղթերէն։

—Ապա՛հ։

Բերսիլար իր տրցակը կը փայփայէր, ձեռքերը վրայէն անցունելով մեղմիւ, թուղթը ողորկելու համար կարծես։ Կը ծալլէր ու կը բանար, քիթը մէջը կը խոթէր։

Յանկարծ սկսաւ մեղկօրէն պագնել զայն։

Յետոյ, գաղափար մը յղանալով.

—Պատուհանէն մէկը չէ՞ կրնար տեսնել մեզի։

Եւ գնաց գլուխը ապակիներուն կրթնցուց։ Դաշտն ամայի էր։ Գիշերուան մութը սաստիկ էր։

Երկար ատեն մնացին այդպէս անխօս։

—Պառկինք, ըսաւ Ժաքթէն։ Եթէ այնքան ուշ ատեն լոյս տեսնան մեր սենեակին մէջ, կասկածի կ'երթան...

Հանուեցան և վերմակներուն տակ սահեցան, իւրաքանչիւրն իր անկողնին մէջ, հարստութիւնը կուրծքին վրայ բռնած։

Բայց քուներնին չէր տաներ։

Չէին խօսեր սակայն։ Չէին ալ շարժեր։

Ապագայի երազներ, կապոյտ երազներ կը շինէին։

Միայն, ամենափոքր աղմուկը կը դողացունէր զանոնք, սրտերնին, քունքերնին կը բաբախէր, սարսափը կը սառեցունէր։

Բուեր եկան լալ իրենց պատուհանին տակ։

Բերսիլար ընդոստ ցատքեց։

—Կը լսե՞ս։ Ասիկա նշան մըն է։

—Այո... շատ են... Մտիկ ըրէ... Լեռնէն, ահասիկ կը պատասխանեն։

—Գիտցած ըլլալու են որ ստակ ունինք։

—Գողնալու եկած են։

—Գուցէ մեզի սպաննելու։

Աւելի ուշադրութեամբ մտիկ ըրին։

—Բերսիլար, դուն ապուշ մըն ես։ Բուեր են պարզապէս։

—Ոչ, ոչ, քիչ մը առաջ մարդեր էին։

—Պէտք է որ ռեվոլվեր մը գնենք։

—Հրացանը աւելի աղէկ է։

—Ինչո՞ւ։

—Ռեվոլվերը դժուար կը գործածուի... գիտնալ պէտք է... ինքզինքնիս կը մեռցունենք։

Լռեցին։

Բայց քունը նորէն չէր գար։

Հովը ելաւ, ծառերուն մէջ սուլեց։

Կարծեցին թէ մարդեր կուլային տան սեմին վրայ։

Ժաքթէն ելաւ անկողնէն, դրան մօտեցաւ։

—Ո՞վ է ան, ըսաւ, շատ ուշ ըլլալուն դուռը չի բացուիր։

Ոչ ոք պատասխանեց։

—Վաղը նորէն եկէք, գոչեց Բերսիլար անկողնին խորէն, վաղը ողորմութիւն կուտանք քեզի։

Գիշերն անցաւ առանց ուրիշ արկածի։

Առտուն Էկիյէլթի հօրը գացին, առնելիքնին գանձեցին, իրենց հաշիւները կարգադրելով։

Կէսօրէն ետք, որոշուեցաւ որ Բերսիլար տունը մնայ և հսկէ Ժաքթէնին հարստութեանը վրայ, մինչ սա աւելի հանգիստ բնակարան մը պիտի փնտռէր։

Այս քննութեան միջոցին էր որ Ժաքթէն գինովցաւ և գինովցած միջոցին էր որ Անթօնիօին հանդիպեցաւ։

Յաջորդ օրն իր կարգին պահպանեց գանձը՝ թոյլ տալու համար Բերսիլարին որ քանի մը պտոյտներ ընէ։

Եւ այսպէս կարգադրեցին իրենց կեանքը։

Ա՛լ այդ ստակին համար միայն կ'ապրէին։ Ա՛լ ուրիշ բանի վրայ չէին խորհեր։ Ամեն բան անոր կը տանէին։ Իրենց միակ մտազբաղումն էր, եւ, պէտք է ըսել, իրենց միակ հաճոյքը։

—Եթէ կողոպտուէինք։ Եթէ տունն այրէ՛ր...

Երբ որոշէին մէկտեղ դուրս ելլել, հետ կ'առնէին պանքնոտները։ Իրենց պլուզներուն մէջ կը կարէին ամրապէս, որոց տակ հաստ կտաւէ գրպան մըն էին շինած։

Հիմակ ա՛լ վախ չունէին զանոնք կորսնցունելու։

Գիշերը, աւելի ապահովութեան համար, հագուած կը պառկէին։ Սակայն, իրենց հոգն ակներեւ էր։ Աւելի քան քառսուն տարիէ ի վեր միասին ապրելու վարժուած, նոյն թշուառ ու մուրացիկ կեանքով, աղէկ կը ճանչնային զիրար։

Երբեմն Ժաքթէն կը հարցունէր.

—Ի՞նչ ունիս, ծերուկ Բերսիլարս։ Տարօրինակ կերպարանք մը ունիս։

Միւսը կը ժպտէր։

Յաջորդ օրը Բերսիլար եւս կը հարցունէր.

—Եւ դուն, ծերուկս, ա՛լ կայտառ չես։

—Ե՞ս, գնա բանդ, ինծի անանկ կուգայ որ տասնըհինգ տարու եմ...

Սակայն Բերսիլար ըսաւ անգամ մը.

—Ժաքթէն, բան մը կը ծածկես ինծի։

—Կ'երդնում որ ոչ։

—Հիւանդ ես։

—Երբեք ասանկ քաջառողջ եղած չեմ, քանի որ երբեք այսքան աղէկ կերած խմած չենք։

—Ամեն ատենուան պէս չես։

—Ինչէ՞ն նշմարեցիր։

—Շատ պարզ է... Չորս օր կայ որ չես գինովցած։

Ժաքթէն ծռեց գլուխը։ Ձայն չհանեց։

Շիտակ էր երեսին զարնուածը. չորս օրէ ի վեր կաթիլ մը օղի իսկ չէր դպած բերանը։ Սաստիկ կ'անձկար։

Բայց այդ իրիկունն իսկ, անշուշտ ապահովցնելու համար Բերսիլարը, գործաւորներ փռուած գտան զայն Բրատէն Էկիյէլթ երթալու ճամբուն վրայ և անոնցմէ երկուքը առին ընկերոջը տարին սաստիկ գինով։

Իրենց կենցաղին փոփոխութեանը հոգերուն ու անձկութիւններուն մէջտեղ, աչքէ չէին հեռացուներ իրենց ապագայի ծրագիրները։

(Շարունակելի)

Կ. ՊՈԼԻՍ, 19/31 ՕԳՈՍՏ. 1894

ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՎԻՊԱԿԻ ՄԸ ԱՌԹԻՒ

«Աննա»ն մեծ աղմուկ է հանել . . .
«Աննա»ն շատ համակրողներ է գտել . . .
«Աննա»ն մի վիպական գոհար է . . .

Տեսա՞ք օրուայ նորութիւնը։ Սակայն մենք անհաղորդ ենք մնացել այդ վերին աստիճանի հետաքրքիր նորութեան։ Եւ ոչ միայն մենք, այլ և մեր հարիւրաւոր երկսեռ ծանօթները, այլ և մի քանի տասնեակ ընտանիքները, որոնք առանց բացառութեան նոր երիտասարդութեան են պատկանում։ Սրանք էլ անհաղորդ են մնացել։ «Աննա»ն, այդ գրականական գոհարը, սրանց մէջ նոյն արձագանք չէ գտել, —ահա՛ ամենամեծ դժբաղդութիւնը։

Եթէ այդ վիպակը հրատարակող թերթին խմբագրականը չը լինէր, մենք յաւիտեանս պէտք է կարծէինք թէ «Աննա»ն մի չնչին ասուպ էր, որ եկաւ, մի երկվայրկեան պլպլաց մեր գրականական հորիզոնի վրայ և գնաց թաղուելու յաւիտենական մոռացութեան մէջ։

Բայց այս խմբագրականով աշխատւում է հաւատացնել թէ «Աննա»ն օրուայ նորութիւնն է կազմում, թէ նա գլորեցրել է ամբողջ Պոլիսը, թէ ինքն ուր որ գնացել է, ում որ հանդիպել է, ամենքն էլ բերան բաց, հիացմունքով ու յափշտակութեամբ «Աննա»յի մասին են խօսել (՞)։ «Ի՜նչ գեղեցիկ վէպ . . . ի՜նչ խոհեմական տիպ . . . ի՜նչ . . .» այսպիսի բացականչութիւններով են դիմաւորել։

Ի՜նչ սիրուն ռէքլամ։

Առեւտրական հրապարակի վրայ ռէքլամը մեծ դեր է խաղում։— այդ մեզ լիովին հասկանալի է, թէեւ բաց գիտենք որ ռէքլամի գէթ կէսը միշտ սուտ է։ Բայց ռէքլամ գրականական հրապարակի վրայ՝ այդ իսկապէս օրուայ նորութիւն է և մեզ բոլորովին անհասկանալի։

Ես կ'ուզէի մեր ընթերցողների հետ միասին՝ եթէ միայն կը բարեհաճէին՝ քննադատական մի փոքրիկ գրոսանք կատարել «Աննա»յի վրայ, կատարելապէս համոզուելու համար՝ թէ նա ա՞յն է որպիսին ներկայացնում է մեզ խմբագրական ռէքլամը։

Հարկ եմ համարում հրապարակով խոստովանել՝ թէ Ս. Ղազարու վանքում ուսած չլինելով, յիշողութիւնս մի փոքր թոյլ է, որով այդ վէպիկի մանրամասնութիւնները, որոնք իսկապէս պէտք էլ չեն, մոռացել եմ. բայց ընդհանուր բովանդակութիւնը այնքան լաւ եմ յիշում, որ քննադատական ակնարկութիւններիս հետ միասին կարող եմ ծանօթացնել Արեւելքի ընթերցողներին։

Ահա՛.

Մի հայ երիտասարդ իւր երկրի մի անյայտ անկիւնից գնում է Փարիզ ուսանելու։ Ընտրած մասնաճիւղը յայտնի չէ, այդ գաղտնիքը հեղինակն իրեն է վերապահել։ Վիեննայի կայարանում հանդիպում է նա մի ռուս ուսանողուհու, որ Ռուսաստանի խորքերից գալով, նոյնպէս ուսանելու է գնում։ Սա մի շատ գեղեցիկ և քնքոյշ արարած է. բարձրահասակ, կապոյտ աչքերով, վերջապէս սիրելու արժանի մի բան։ Եւ մեր հայ հերոսը, մոռանալով սիրելու տարրական պայմանները, մոռանալով կրօնական խտրութիւնը, առանց ուշ դարձնելու թէ ինքն աւելի բարձր ձգտումների, աւելի վսեմ գաղափարների վրայ սիրահարուելու կէս ճանապարհի վրայ է գտնւում, և նոյն իսկ առանց ծանօթ լինելու օրիորդի բարոյական այն առաւելութիւններին հետ, որոնք ամուսնութեան և ապագայ երջանկութեան ոսկի օղակն են կազմում,— այո՛, առանց ուշ դարձնելու այս բոլորի վրայ, վայրկենապէս մինչեւ ականջները սիրահարւում է Աննայի վրայ։

Պէտք չէ մոռանալ և այն թէ և՛ւ հանդիպումը և՛ւ սիրահարութիւնը կատարւում է կայարանի մէջ, դէպի իրենց բարձրագոյն և սրբազան նպատակը սլանալու պահուն։

Եւ Աննան, այդ վէպիկի հերոսուհին, անձայն տարածութիւն անցնելով Վիեննա գալուց յետոյ, տոմսակ վերցնելու պահուն իսկ դեռ ոչ միայն չգիտէ թէ ամսական ծախքերի համար ո՛րքան դրամ է պէտք իրեն, այլ և չգիտէ թէ՝ ո՞ւր պէտք է գնայ — Փարի՞զ, Ցիւրի՞խ, թէ մի ուրիշ տեղ։

Սա՛ իրաւ՝ ուսանողական կեանքի մէջ մի հազուագիւտ տիպար է, որպիսին ստեղծելու համար հեղինակը մեծ ճիգ թափած պէտք է լինի։ Ի հարկէ հեղինակը Աննայի խելքի, դատողութեան, կամքի և այլ այսպիսի բաների շատ ողորմելի պաշարով է օժտել մի միայն նրա համար, որ իւր միւս հերոսը՝ հայ ուսանողը՝ դիւրութեամբ կարողանայ մնացած խելքն էլ ձեռքից խլելով, փոխանակ մի ուրիշ տեղ ղրկելու, քարշ տայ իւր հետ Փարիզ և նրանով զուարճանայ, նրանով սիրային քաղցր ժամեր անցնի, որպէս անում են մեր արտասահմանեան ուսանողներից մեծ մասը։ Եւ հեղինակի կամքը ճշդութեամբ կատարւում է. հայ ուսանողը հասնում է իւր նպատակին։ Աննան ոչ միայն Փարիզ է գնում, այլ և իւր առաջին ծանօթ ճանապարհորդակից և ազգակից ընկերուհուն թողնելով, սենեակ է վարձում հայ ուսանողի հետ միասին, միեւնոյն տան մէջ։ Հէնց այստեղ էլ սկսւում է քաղցրձայն սիրահարութիւն, սիրոյ խոստովանութիւններ, պաչ ու պուշ, միմեանց գիրկ նետուելու, միմեանց աչքերի խորքը նայելու, միմեանց առջեւ ծունր խոնարհելու եւայլ բուն սիրահարական սրտաշարժ տեսարաններ, կարծես թէ հազարաւոր մղոններ անցնելով ա՛յդպիսի բաների համար Փարիզ եկած լինէին։

Բայց բանից երեւում է որ այդ թեթեւամիտ Աննան,— որին և անբարոյական կոչելու իրաւունք ունինք,— իւր երկրում արդէն մի սիրական էլ ունի, որից շարունակ նամակներ է ստանում։ Հայ հերոսը այդ իմանում է Աննայի բերանից, նամակների ո՞ր տեղից կամ ո՞ւմից եկած լինելու մասին հարցրած ժամանակ։ Մեր կարծիքով եթէ հայ ուսանողը պարկեշտ և պատուաւոր մարդ լինէր, իսկոյն կը ձգէր և կը հեռանար սիրոյ հետ կատակի ձեւով խաղացող այդ անբարոյական աղջկից, որի հոգեկան դատարկութիւնների հետ էլ բաւական ծանօթ էր։ Եթէ այդպէս վարուէր, վէպը այստեղ կը վերջանար. բայց հեղինակը ուզում է որ նա մի փոքր էլ երկարի. ու մեր հայ ուսանողը սկսում է համոզել օրիորդին՝ թէեւ քաղաքավարի ձեւով, որ հրաժարուի իւր նախկին սիրականից, որ մերժողական պատասխան գրի, կամ նրա նամակները անպատասխան թողնի։ Աննան հրաժարւում է այդ անել, ասելով՝ որ թէեւ ինքը նրան չէ սիրում, բայց խղճում է նրա վրայ, որովհետեւ նա թոքախտաւոր է և իրեն այնքան է սիրում, որ իսկոյն կը մեռնի՝ եթէ ինքը մի այդպիսի բան անէ. . . ։ Այս փոխադարձ բացատրութիւններից յետոյ, որոնք բաւական էին ինքնասիրութեան զգացում ունեցողներին ընդ միշտ միմեանցից բաժանելու,—ընդհակառակը դարձեալ շարունակւում են նոյն գրկախառնութիւնները, նոյն համբոյրները, փոքրիկ միջադէպերի ընդմիջումով և այն՝ ի յիշատակ թոքախտաւորին։

Պէտք է ասել որ Աննան որպէս փոփոխամիտ աղջիկ, մինչեւ այստեղ իւր դերը բաւական լաւ է կատարում, կամ ուրիշ խօսքով՝ հեղինակը մինչեւ այստեղ բաւական հաւատարիմ է մնում իւր հերոսուհուն սկզբից յատկացրած բնաւորութեան։ Սակայն սրանից յետոյ է, որ հեղինակը քայլ առ քայլ շեղւում է ուղիղ գծից։ Աննան իւր ներքը անորոշ տատանմանք է ըզգում. ո՞րին ընտրէ, ո՞րին թողնէ, ընտրէ՞ սրանցից մէկին թէ ոչ.—այս է նրան տանջողը, թէև հեղինակը լուռ է անցնում։ Եւ որովհետեւ Աննան չունի կամքի ոյժ, չունի դատելու և վճռելու սեփական ընդունակութիւն, որպէս թոյլ, անզօր և ողորմելի արարած մնում է երկու կրակի մէջ տեղ. . .

Որպէս գրականութեան, նոյնպէս և իրական կեանքի մէջ այդքան ողորմելի արարածների հանդիպած ժամանակ, միշտ խղճացել եմ և զարմացել թէ Նախախնամութիւնը մարդկանց հոգեկան ոյժ, արութիւն բաշխած ժամանակ ո՛րքան ժլատ է գտնուել մի քանի ողորմելիների նկատմամբ։ Բայց շարունակենք։

Աննան որ հայ ուսանողի սենեկուհին է, սոյն խօսակցութիւններից յետոյ իրեն վատ է զգում ու առաջարկում է ուսանողին, որ իւր թեւը մտնի և առաջնորդէ իւր սենեակը։ Միեւնոյն ժամանակ Աննան պատուիրում է հայ սիրականին որ իրեն սենեակ հասցնելուց յետոյ իսկոյն հեռանայ, որովհետեւ ինքը պէտք է պառկի։ Բայց երիտասարդը նրա պատուէրը ակամայ կատարած պահուն, Աննան կրկին յետ է կանչում նրան, ապա դարձեալ հեռացնում է, և այլն, որը կատակերգական մի շատ զուարճալի տեսարան է։

Բայց սոյն փոփոխամիտ Աննան մի վճռական քայլ է անում, (եթէ այդ բնաւորութեան տէր արարածներին վճռական քայլ անել կը յարմարի), այն է—թողնում է այդ սենեակը և իւր նախկին ճանապարհորդակից ընկերուհու մօտ է տեղափոխւում։ Միթէ վիպական հերոսների կամքը հեղինակի կամքից չէ՞ կախուած. հեղինակը ցանկանում է որ Աննան այդպէս վարուի, և սա՝ հակառակ իւր միս և արիւն դարձած բնաւորութեան, հնազանդում է իւր մանկանացու ստեղծողի կամքին։ Ու՛ ինչպէս ասացինք, տեղափոխւում է. սակայն երբ հայ ուսանողին իրաւունք է տալիս ուզած ժամանակ իւր մօտ յաճախել, Աննան սրանով կրկին վերադառնում է իւր սովորական փոփոխամտութեան, որով և մի փոքր անհաւատարիմ է գտնւում իւր հեղինակի կամքի դէմ. կամ՝ աւելի ճիշդն ասած՝ հեղինակը կորցնելով իւր գծելի պատկերի ուրուագիծը, թափառում է իրեն անհասկանալի մի քաոսի մէջ։

Ի՞նչպիսի տպաւորութիւն կը թողնէր ձեր վրայ մի պատկեր, որ ամբողջովին նկարելուց յետոյ, երբ՝ դիցուք՝ միայն քիթն է մնում, յանկարծ նկարիչը կորցնելով մտքը, մի ուրիշ անհարազատ քիթ յարմարեցնում է իւր նկարի դէմքի վրայ.— ասում եմ՝ ի՛նչպիսի տպաւորութիւն կը թողնի և ո՛րպիսի ներդաշնակութիւն կունենայ մի այդպիսի պատկեր, նոյն աններդաշնակ և վատ տպաւորութիւնը թողնում է ինձ վրայ մանաւանդ Աննայի վերջին վարմունքը, երբ նա Փարիզն ու համալսարանը թողնելով գնում է իւր երկիրը քոլերայի դէմ կռուելու, ուր և գտնում է իւր մահը։

Այս բանն՝ գոնէ մեր ճանաչած Աննային ամենեւին չէ յարմարում. բայց և այնպէս մենք էլ մի մի բերան «Աստուած ողորմի իր հոգուն» ասելով, համառօտենք մեր խօսքը մի քանի հարցի մէջ։

Ի՞նչ անուն կտայիք մէկին որ միջնակարգ կրթութիւն ստանալուց յետոյ, երբ պատրաստւում է համալսարան գնալ, դեռ տեղեկութիւն չունէ՝ թէ ո՛ր երկրի և ո՛ր համալսարանի մէջ աւելի լաւ կարող է մշակել իւր . . . մասնագիտութիւնը . . .

Ի՞նչ անուն կտայիք նրան որ ուսանելու նպատակով մինչեւ Վիեննա է հասնում և այդ տեղից էլ դուրս գալու պահուն դեռ չէ որոշել թէ ո՞ւր է գնալու . . . որ իրեն անծանօթ մի հայի քաղցրներին հաւատ ընծայելով Փարիզ է գնում, ուր և սկսում է տեղի տալ սիրախօսութիւնների, համբոյր ու գրկախառնումների, առանց հաշուի առնելու թէ արդէն մի սիրական ունի, որի հետ նոյնպէս բնականաբար սիրային աւելի երկար ժամանակներ է անցրել . . . վերջապէս ի՞նչին պէտք է վերագրել այն կացութիւնը, որի մէջ ընկաւ, հեղինակի ասելով, երկու կրակի մէջտեղ մնաւ, և այլն։

Մենք կը պատասխանենք—Աննան հոգով ու մտքով մի դատարկ աղջիկ էր. Աննայի մէջ գոյութիւն չունէր ինքնակառավարութեան համար ո՛չ մի սեփական ոյժ։ Աննան միեւնոյն ժամանակ և անբարոյական էր, թէեւ նրան անբարոյականութեան մղողը իւր անմտութիւնն էր։

Սակայն մեր ակնարկած խմբագրականք երկար ռէքլամներով աշխատում են հաւատացնել մեզ՝ թէ «Աննա»ն մի անզուգական գրուածք է, թէ Աննան տիպական տիպ է։ Ապա մեզ են բերում սքանչացողների մի շարք, որոնք ամեն տեղ և ամեն ժամանակ՝ իբր թէ միմիայն Աննայի վրայ են խօսում (՞). «Խե՜ղճ աղջիկ . . . խոհակա՜ն աղջիկ . . .» բացականչում են իր ընթերցողներն ու ընթերցողուհիները։

Տաղանդները մշակւում, կատարելագործւում են ոչ թէ մի եր կու բարեկամների չափազանց ռէքլամներով, այլ անաչառ և խիստ քննադատութեամբ։

Ցաւանք թէ սոյն ճշմարտութիւնը լաւ ըմբռնելով, «Աննա»յի հեղինակը չի շլանար շռայլուած խնամական գովեստներով։

Ա. Ց. Մ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ. — Վիքթորիա թագուհին իւր գահաճառով որով կը փակէր Խորհրդարանն, յիշեց նաեւ գահժառանգի մը ծնունդն, երրորդ սերունդի գահաժառանգ, բան մը որոյ օրինակը չկայ Անգլիոյ գահուն պատմութեան մէջ։ Թագուհին ցաւ յայտնեց որ Ափրիկէի մասին Անգլիոյ և Ֆրանսայի միջեւ յուզուած խնդիրներ չեն կարգադրուած դեռ. բայց երէկ Գործակալութիւն մը, աւելի կամ նուազ իրական հեռագիր մը կլմնկով, զրոյց մը կը յիշէր թէ Ֆրանսայի և Անգլիոյ միջեւ արդէն իսկ համաձայնութիւն գոյացած է Անգլիոյ և Քոնկոյի պայմանագրէն ծագում առած խնդիրներուն վրայ։

ՍԻԱՄԻ ֆրանքօ-սիամական դաշնագիրն Անգլիա մտած չէ, ինչպէս Ֆրանսա մտած չէր անգլօ-սիամական պայմանագիրը Քոնկոյի համար։ Թագուհին իւր գահաճառով այս մասին հետեւեալն ըսաւ. «Սիամի գործերուն շատ լրջօրէն հետամուտ կը գտնուիմ։ Իմ կառավարութիւնս չի կրնար անտարբեր ըլլալ այն Տէրութեան (Սիամ) բարօրութեան, ուր անգլ. վաճառականութեան շահերն այնքան առաւելակշիռ են։ Համոզուած եմ որ Ֆրանսայի և Սիամի վերջերս կնքուած դաշնագրէն ծագում առնող խնդրոց վերջնական կարգադրումն աւելի երկար ժամանակ չի կրնար յետաձգուիլ, և այժմ պատուիրակներուս պաշտօն յանձնած եմ ֆրանսական պատուիրակներու հետ համաձայնութեամբ տեղւոյն վրայ ճշդել այն սահմաններ զոր պատշաճ է տալ չէզոք երկրի մը, Մեքոնկ գետի կողմն, որպէս զի այն երկիր զատէ իմ ստացուածքս ֆրանսական Հանրապետութեան ստացուածքէն։»— Յայտնի է թէ Սիամի կողմը շարունակ սահմանի կռիւ չունենալու համար, Ֆրանսա և Անգլիա սկզբամբ ընդունած են որ երկուց Տէրութեանց սահմաններուն մէջտեղ չէզոք երկիր մը գտնուի՝ բնիկ ցեղապետի մը վեհապետութեամբ։ Ֆրանսա աւելի կամ նուազ թեւարկութիւն հաստատած է Սիամի վրայ, բայց Անգլիա ըստ կարելւոյն պահպանել կ'ուզէ Սիամի անկախութիւնն, ի պաշտպանութիւն անգլ. առեւտրական շահերուն, որք ֆրանսական շահերէն անհամեմատ աւելի են հոն։

ՅՈՒՆԱՍՏԱՆ. —Ընթերցողք գիտած են՝ Յունաստանի հանրային պարտուց բանակցութիւններուն վրայ հրատարակուած տեղեկութեանց մէջ՝ որ Գերմանիք ամենէն աւելի խստապահանջ կ'երեւին, մինչ Անգլիացիք իրաւախոհ ըլլալու կողմն են։ Այս տարբերութիւն հետեւեալ կերպիւ կը բացատրուի. — Վիլհելմ կայսեր քրոջ Սոֆիա իշխանուհւոյն Յունաստանի գահժառանգին հետ ամուսնութենէն ետքը, Գերմանիք հաւատալով թէ այս միութեան շնորհիւ գերմանական ազդեցութիւնը պիտի զօրանայ և տարածուի Յունաստանի մէջ, սկսան հելլենական արժեթղթեր գնել։ Իսկ Անգլիացիք, աւելի գործնական մարդիկ, հելլենական վերջին փոխառութեան յաջողութեան մասին տարակուսելու պատճառներ ունենալով, սկսան ծախել հելլենական արժեթղթերն, այնպէս որ Գերմանիք այժմ աւելի քան 350 միլիոն մարքի առնելիքւոր են Յունաստանէ, մինչ Անգլիացիք համեմատաբար շատ փոքր գումար մը կը պահանջեն, և վերջնական կարգադրութեան մասին ալ այնքան խստութիւն չեն ցուցներ։

ԳԵՐՄԱՆԻԱ. — Գերմանական սպառազինութեան հետեւակազօրաց համար ընդունած է նոր հրացան մը, որոյ փորձերը պիտի ըլլան առաջիկայ աշնան մեծ ռազմափորձերուն մէջ։ Նոր հրացանը կը նմանի խորտոնկէթի ([illegible]), և այնքան թեթեւ որ մէկ ձի կը բաւէ զայն փոխադրելու։ Ուրիշ ձի մը կը կրէ ռազմամթերքն, և նոր հրացանը լարելու և թշնամւոյն վրայ անձրեւի պէս կրակ տեղացնելու համար երկու-երեք վայրկեան կը բաւէ։

ՆՈՐ ԹՈՒՆԷԼ. — Զուիցերիոյ Դաշնակցային Խորհուրդն ընդունեց Սէմբլոն լեռը ծակելու և Իտալիոյ և Զուիցերիոյ միջեւ նոր թունել մը բանալու ծրագիրը։ Կը մնայ ստանալ Իտալեան կառավարութեան հաւանութիւնը։ Թունէլին շինութիւնն $5\frac{1}{2}$ տարի պիտի տեւէ, երկաթուղւոյ մէկ գծի համար պէտք եղած լայնութեամբ։ Բայց առաջիկային եթէ պէտք տեսնուի, գիծն երկուք ընելու համար լայնցնել կարելի պիտի ըլլայ։ Երկաթուղւոյ մէկ գծի շինութեան համար $64\frac{1}{2}$ միլիոն ֆր. ծախք հաշուուած է, և ի հարկին երկրորդ գիծն ալ շինելու համար 15 միլիոն ֆր.։

Պ. ԿԼԱՏՍՏՈՆ ամեն առաւօտ, ամառ լինի թէ ձմեռ, եկեղեցական պաշտամունքի ներկայ կ'ըլլար Հաուարտէնի եկեղեցւոյն մէջ. Բայց քանի օրէ ի վեր օդը շատ խոնաւ ըլլալով Անգլիոյ մէջ, փոխանակ առաւօտ՝ երեկոյեան ժամերգութեան կ'երթայ։ Մեծ զգուշութեամբ կ'ապրի։

ՌՈՒՍԻԱ. — Անցեալ օր ծանուցինք թէ Քրոնշտատի հրամանատար Ռասվոզով Գ. կարգի ծովակալն սպանող Բէնինսքի ի մօտոյ պիտի դատուի եղեռնադատ ատենին առջեւ։ Ըստ նորագոյն տեղեկութեանց, չարագործն ինքզինք եւս սպաննած է։ Երկու հազար րուպլի գողութեան մը համար ճամբուած պաշտօնեայ մ'էր, որ իւր անձնական վրէժը լուծել ուզած է, և ճամբան սպասելով, կրակ ըրած է։ Ետոյ, ատրճանակն իրեն դարձուցած է, և երկիցս կրակ ընելով իւր կուրծքին, մեռած է։

ՆՈՐ ՄԵՔԵՆԱՅ մը հնարեցաւ, սպանելու փոքրիկ վառարանի մը ձեւով, մաքրելու համար վիրաբոյժներու, սափրիչներու և վարսայարդարներու գործիքներն, որք զանազան մարդոց վրայ գործածուելով, կը վարակուին այլ և այլ հիւանդութեանց սերմերով։ Անցեալներն յատուկ հաւաստմով մը ուշադրութիւն կը հրաւիրէին ֆրանսացի բժշկաց այն դիտողութեան վրայ թէ սափրիչներուն և վարսայարդարներուն գործածած մկրատներն ու մազ կտրող նորահնար գործիքներն առաջին կարգի միջոց մ'են մազի և մորթի հիւանդութիւնները մարդէ մարդ փոխանցելու։ Մաքրութիւնն անհրաժեշտ է այս ամեն գործեաց համար, և Անժէրի (Ֆրանսա) բժիշկ Տքդ. Քէնդառի գիւտն այս պէտքին գոհացում կուտայ։ Ալիւմինիումէ շինուած է թեթեւութեան համար, և ամրապէս փակուած։ Սպիրտոյի կանթեղով մը կը տաքնայ 120էն 200 աստիճան հարիւրամասնեայ, որով կարելի է ամեն միքրոպ սպանել, առանց մաքրուող գործիքին մետաղին վնասելու։

ԴԵՂԱՐՈՒԵՍՏՔ. — Զարին հրամանաւ, Մոսկուայի մէջ կը շինուի Երաժշտութեան նոր վարժարան (Քոնսէրվաթուար) մը իբր իննսուն հազար ռուբլ. ոսկւոյ ծախքով։ Իբր հազար ուսանողք պիտի կրնան հետեւիլ այս հաստատութեան ուսմանց ընթացքին, որոցմէ ոմանք, ամենէն աւելի ընդունակներուն մէջէն ընտրուած, մնայուն կերպիւ հոն պիտի բնակին։ Այն հրապարակին մէջ որով շրջապատուած պիտի ըլլայ նոր հաստատութիւնը, պիտի կառուցուին արձանք Նիքոլա Ռուպինշդայնի, որ երբեմն տնօրէնն էր և Զայքովսքիի որ վերջին տնօրէնն եղաւ Մոսկուայի Երաժշտանոցին։

ՕՐՈՒԱԳԻՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՄԵԾ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՉԻՆԱՑԻՈՑ

ՇԱՆՂԱՅ, 28 Օգս. («Թայմզ»ի Թղթակցէն)—Չինացիք, օգնութեամբ 5,000 Քորէացւոց, Սէուլէ 40 մղոն վեր ի հիւսիս յաղթեցին ճափոնական բանակին, մեծ կորուստներ կրել տալով անոր։

ՀԻՒԱՆԴՔ ԵՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

ՎԻԵՆՆԱ. — Ֆրէմտէնպլաթ, արտաքին գործոց նախարարութեան պաշտօնաթերթը, կ'ըսէ թէ Զարին առողջական վիճակն հոգ չի պատճառեր. Բիչ ատենէն կատարեալ ապաքինութիւն կը յուսացուի։ Ինֆլուենցայի յաճախակի կրկնութեանց հետեւանք է Զարին արդի տկարութիւնը։

ՓԵՏԵՐՍՊՈՒՐԿ. — Զարին հիւծախտաւոր որդւոյն Կէորկիոյ մեծ դքսին վիճակն զգալապէս բարւոքեր է։ Կովկասէն պիտի մեկնի և նախ Պիէլովոսքի և յետոյ իւր ծնողաց քով Սպալա պիտի երթայ։ Բրոֆ. Զախարին Արքունեաց բժիշկ պիտի անուանուի վերջնապէս։

ՊԵՐԼԻՆ. — Օգոս. 20—27 բովանդակ Գերմանիոյ մէջ հնտախտէ վարակեալք 78 մեռեալք 32։

ՀՈԼԱՆՏԱՑԻՈՑ ԴԼԽՈՒ ՑԱՒԸ

ԱՄՍԹԷՐՏԱՄ. —Պաշտօնապէս հաստատուած է հոլանտական զօրաց պարտութիւնը։ Պատերազմին պատճառ եղած էր տեղւոյն նախորդ վեհապետին ընթացքը։ Հիմակ հոլանտական մարտանաւք կը ռմբակոծեն Մատարա մայրաքաղաքը։ (Տե՛ս երեկի Արեւելք»ին մէջ։)

ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԸ

ԼՈՆՏՐԱ. — Պանքային մէջ այս եօթնեկին ոսկեգումարը աւելցած ըլլալով, պահեստից համեմատութիւնը բարձրացած է 70. 27 %։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾՔԸ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ. — Խորհրդարանը դադրեցուց իւր նստաշրջանը։

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ. — Կառավարութիւնը խնդրեց Խորհրդարանէն որ նահանգներու կնքած պարտքերը փոխանցուին Տէրութեան։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ Ի ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Ըստ պաշտօնական յայտարարութեան Ազգ. Պատրիարքարանի, այս առաւօտ Մայր եկեղեցւոյ մէջ գոհաբանական հանդիսաւոր մաղթանքներ կարդացուեցան վասն կենաց և բարօրութեան վեհ. Սուլթանին, Ն. Կ. Վեհափառութեան գահակալութեան տարեդարձին առթիւ։

Այս արարողութեան ներկայ էին՝ եպիսկոպոսական դասէն՝ Գեր. Սիմէոն, Բարթուղիմէոս, Գրիգորիս Յովհաննէսեան, Գրիգորիս Ալէաթճեան, Աբրահամ Մամիկոնեան Սրբազանները, Պատր. Գեր. փոխանորդ Հայրը և քարոզիչ վարդապետք ու քահանայք։ Քաղաքական Ժողովէն՝ Տիգրան էֆ. Եուսուֆեան, Յովհաննէս էֆ. Ազնաւուրեան, Տիգրան էֆ. Բարսղամեան, Յովհաննէս էֆ. Թորոսեան, Միհրան էֆ. Սէթեան, ինչպէս նաեւ տեսուչ խորհրդոց անդամք, Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան, Միացեալ ընկերութեանց եւ Թաղական խորհրդոց ներկայացուցիչք ու Գալֆայեան Որբանոցի Մայր՝ Նրանուհի մայրապետը։

Ներկայ էին նաեւ բազմաթիւ ծանօթ ազգայինք և բազմութիւն ժողովրդեան։

Պատրիարքական Տեղապահ Գեր. Հմայեակ Սրբազան կը նախագահէր հանդէսին որ սկսաւ ժամ $3\frac{1}{2}$ին Հայր մերով և Տէր ի զօրութեան քում Սաղմոսերգութեամբ, որուն յաջորդեց Թագաւոր փառաց շարականը եւ ապա Պօղոս Առաքեալի Թղթոյն ընթերցումը Գեր. Աբրահամ եպիսկոպոսի կողմէ ու Աւետարանի ընթերցումը Գեր. Յովհաննէսեան Գրիգորիս Սրբազանի կողմէ։

Ապա, Պատրիարքական Տեղապահ Սրբազանը քարոզ խօսելով՝ Օգոստափառ Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ յիշեց Ն. Կ. Վեհափառութեան աշխարհաշէն գործերը ու հայրական շնորհները, և բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց Ն. Կ. Վեհափառութեան։ Բոլոր ներկայք ձայնակցեցան այս բարեմաղթութեանց։

Հանդէսը փակուեցաւ Թուրքերէն երգով մը զոր երգեցին Մայր Եկեղեցւոյ դպրաց դասը։

Պատրիարքական Գեր. Տեղապահը Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան Աբրահամ էֆէնտիի հետ երէկ Բ. Դուռն երթալով այցելութիւն տուաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին, Դատական գործոց Վսեմ. Նախարարին և բոլոր նախարարաց։

Պատրիարքական Գեր. Տեղապահը մայրաքաղաքս գտնուող եպիսկոպոսները երէկուան համար հրաւիրած էր ի Պատրիարքարան։ Այս հրաւէրին անձամբ պատասխանած էին Գեր. Գրիգորիս արքեպիսկոպոս Յովհաննէսեան, Գեր. Սիմէոն արքեպիսկոպոս Սէֆէրեան, Գեր. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան և Գեր. Գրիգորիս եպիսկոպոս Ալէաթճեան, որք տեսակցութիւն մը ունեցան Գեր. Հմայեակ Սրբազանին հետ։

Անգլիոյ պատուաւոր ընտանիքներէն Օր. Շէքսբիր չորեքշաբթի օրը Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցն այցելելով, նոյն հաստատութեան բոլոր յարկերը մի առ մի շրջեր, տիրող մաքրութենէն և կարգադրութիւններէն խիստ գոհ մնացեր և իր գրաւոր շնորհակալութիւնը յայտներ է առ Հոգաբարձութիւն։

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ներկայիւս կը փութանք յայտնել թէ ի նպաստ հաստատութեանս բարեհաճած են նուիրել՝

	Ղրշ.
Բ. էֆ. Իսթանպօլլուեան	120
Յ. » Մոստիչեան (դատաւոր)	120
Ս. » Թաշճեան	120
Բ. » Թէքէեան	108

փոխան ծաղկեփունջի վասն հանգուցեալ Յովհաննէս պէյ Թապիպեանի յուղարկաւորութեան։

* * *

Ներկայիւս կը փութանք յայտնել թէ՝ ի նպաստ հաստատութեանս Մեծ. Ասատուր էֆէնտի Համամճեան բարեհաճած է նուիրել երկու օսմ. ոսկի փոխան ծաղկեփունջի, հանգուցեալ Յովհաննէս պէյ Թապիպեանի յուղարկաւորութեան առթիւ։

* * *

Հանգուցեալ Բարսեղ էֆէնտի Խասպէսէրեանի յուղարկաւորութեան առթիւ ծաղկեփունջի փոխան Մնչ. Պաղտասար էֆ. Տէյիրմէնճեան բարեհաճած է նուիրել մէկ օսմ. ոսկի ի նպաստ հաստատութեանս։ (Հոգաբարձութիւն)

Յառաջիկայ կիրակի, օգոստոս 21, Գեր. Բարթուղիմէոս Սրբազան հանդիսացեալ է գիւղիս Ս. Նիկողայոս եկեղեցւոյն մէջ պատարագ մատուցանել ի հոգեւոր մխիթարութիւն բարեպաշտ ժողովրդեան։ Պատարագէն առաջ, եկեղեցւոյ դպրաց դասէն ոմանց աստիճան պիտի տրուի։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Ն. Ն. ՔԵՕԼԷԵԱՆ Ն. ՊԱՐՈՆԵԱՆ

19 Օգոստոս
Պէյքոզ

Ներքին լուրեր

ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

Այսօր, վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ, Բարձր. Մեծ-Եպարքոսը, Բարձր. Շէյխ-իւլ-իսլամը, նախկին Մեծ-Եպարքոսք, պաշտօնի վրայ գտնուող ու անպաշտօն բոլոր նախարարք և բարձրաստիճան պաշտօնատարք կայս. պալատ կերթան իրենց շնորհաւորութիւնները մատուցանելու. Նոյնպէս հպատակ հասարակութեանց հոգեւոր պետերն և դեսպանատանց առաջին Թարգմանք։

* * *

Պարսից Շահն ինչպէս նաեւ եւրոպական վեհապետք շնորհաւորական հեռագրեր ուղղած են ի կայս. պալատ և ի պատասխանի հեռագրաւ շնորհակալութիւն յայտնուած է։

* * *

Այսօր թէ կեդրոնական բանտէն և թէ զինուորական բանտարկեալներէն անոնք, որք իրենց պատժոյն երկու երրորդ մասն աւարտած են, ազատ պիտի արձակուին։ Այս որոշում գաւառաց մէջ ալ ի գործ պիտի դրուի։

Արձակելի անձանց դրամական պարգեւներ շնորհուած են։

* * *

Թէ մայրաքաղաքիս և թէ գաւառաց մէջ մեծամեծ պատրաստութիւններ տեսնուած են այս գիշեր կատարելի լուսավառութեանց և հրախաղութեանց համար։

* * *

Վեհ. Սուլթանը գումար մը շնորհած է որպէս զի Իր գահակալութեան տարեդարձին առթիւ ազատ արձակուին պարտքի համար բանտարկեալ անձինք, անոնց պարտքերը վճարուելով։

Դատական Նախարարութիւնը ձեռնարկած է կայս. սոյն Իրատէի գործադրութեանը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. — Աթէնքի օսմանեան դեսպանատան երրորդ քարտուղար անուանուեցաւ՝ Բ. Դրան հիւպատոսական գործոց դիւանի քարտուղարներէն Մէհմէտ Ալի պէյ, որ կատարեց օրինական երդումը։

Առաջին կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Գարատաղի իշխանին երկրորդ որդի Միրքօ իշխանին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ. —Վեհ. Սուլթանի բարձր նախագահութեամբ Քաղաքապետութեան պաշտօնատան մէջ կազմեալ արկածելոց նպաստամատոյց յանձնաժողովն մինչեւ երէկ հետեւեալ գումարները գանձած է ի նպաստ երկրաշարժէ վնասելոց։

	Ղրշ.	Փար.
Գումար նախորդ ցուցակի	3,032,627	10
Բարձր. Խտիվին պատուակալ թիկնապահ Միրլիվա Իպրահիմ Ֆեհմի փաշա	5,400	
Երուսաղեմայ նպաստամատոյց յանձնաժողովէն առաջին և երկրորդ անգամ	71,250	
Հալէպի նպաստամատոյց յանձնաժողովէն առաջին և երկրորդ անգամ	59,082	
Իզմիտի կառավարական պաշտօնեայք և ժողովուրդը	30,606	30
Ներքին գործոց նախարարութեան խորհրդական Ահմէտ Ռէֆիք պէյ	1,620	
Նոյն նախարարութեան պաշտօնեայք և քարտուղարք	7,020	
Թէնպէքիի Ռէժիին ընդհանուր տնօրէն գերապատիւ Տը Զօկէլ	10,800	
Եղբայրը՝ Պ. Ժաք	2,160	
Միւս եղբայրը՝ Պ. Շառլ	2,160	
Նոյն վարչութեան առաջին քարտուղար Տեօվլէթ էֆ.	1,296	
Լուսանկարիչ Ապտուլլահ եղբարք.	1,080	
Գումար	3,225,102	

Ի Բ. ԴՈՒՌՆ. — Ամերիկեան դեսպան Պ. Թըրըլ երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. նախարարին և Վսեմ. խորհրդականին հետ։

ԵՐԿՐԱՇԱՐԺ. — Ատանայի կուսակալութիւնն հեռագրած է թէ օգոստոս 12ին ժամ 12.15ին Սէլէֆքէի մէջ երկրաշարժի ցնցում մը զգացուեր է՝ արեւմուտքէն արեւելք, սակայն վնասակար հետեւանք մը չէ ունեցած։

ԹԸՐՍԱՆԷԻ մէջ երէկ ծով իջուցուեցան Սէտտիւլպահր, Զուհաֆ, Շէվքէթնիւմա ու [illegible] երկրորդ կարգի մարտանաւերն և [illegible] ու [illegible] շոգենաւակները։ Վեհ. Սուլթանին կողմէ ղրկուած էր կայս. անձնական սպայակոյտէն Ֆերիդ Շաքիր փաշա։ Ներկայ էին նաեւ Ծովային Վսեմ. Նախարարն եւ բոլոր բարձրաստիճան պաշտօնատարք։ Նախ հանդիսաւոր բարեմաղթութիւններ եղան վասն կենաց Վեհ. Սուլթանին։ Առաջ Շէվքէթնիւմա մարտանաւը ծով իջուցուեցաւ և յետոյ միւսները։ Նոյն միջոցին զինուորական նուագածուաց խումբը Համիտիյէ քայլերգն հնչեցուց և բոլոր ներկայք «փատիշահըմ չօք եաշա» գոչեցին։

Ծովային բոլոր հրամանատարք և սպայք շնորհակալութեան ուղերձ մը մատուցին յոտս կայս. գահոյից Վեհ. Սուլթանն Իր բարձր գոհունակութիւնը յայտնելով հրամայեց Իր կայսերական բարեւները հաղորդել անոնց։

⁂

Սէտտիւլպահր ու Ջիհատ 190ական ոտք երկայնութիւն ունին, 24 ոտք լայնութիւն և 643 տակառաչափ տարողութիւն։ Շէվքէթնիւմա ու Սայեատը Տէրեա՝ 120ական ոտք երկայնութիւն, 18 լայնութիւն և 194 տարողութիւն։ Րէհպէր ու Ատէշ 75ական երկայնութիւն, 13 լայնութիւն և 70 տարողութիւն։

Ի ՆՊԱՍՏ ԱՐԿԱԾԵԼՈՑ.—Երուսաղէմայ գաւառէն երրորդ անգամ ըլլալով 51,199 ղրուշ ղրկուած է կեդրոնական յանձնաժողովին՝ ի նպաստ երկրաշարժէ վնասելոց։

ՔՈԼԵՐԱՆ Ի ԳԱՒԱՌՍ.— Օգոստոս 16էն 17, թէ՛ Էտիրնէի և թէ՛ Ճիսրը Մուսթաֆա փաշաի մէջ քոլերայէ դէպք ու մահ չէ պատահած։

—Էնկիւրիի մէջ օգոստոս 15ին երեք դէպք և առաջուան բռնուածներէն երկու մահ։

Օգոստոս 16ին Նալլու Խանի մէջ հինգ դէպք և հին ու նոր բռնուածներէն հինգ մահ։

Գայսէրիի մէջ ալ օգոստոս 15ին մէկ դէպք և օգոստոս 16ին մէկ դէպք։ Առաջուան բռնուածներէն մէկ մահ։ Այալի մէջ օգոստոս 16ին երեք դէպք և առաջուան բռնուածներէն մէկ մահ։ Զօրումի և Եօզղատի մէջ դէպք ու մահ չէ պատահած։

—Մալաթիայի մէջ օգոստոս 15էն 16, մէկ դէպք և առաջուան բռնուածներէն մէկ մահ։

Արաբկիրի մէջ տասներկու դէպք և հին ու նոր բռնուածներէն եօթը մահ։

ՈՒՇԱԳԻ ՀՐԴԵՀԸ, առնուած նորագոյն տեղեկութիւններուն նայելով, ամսոյս 14ի առաւօտուն ծագելով մինչև գիշեր տեւեր է, աւելի քան 2000 տուն մոխիր դարձնելով։ Հրդեհը ծագեր է Բէյմէզ-Խանի մէջ, օսմ. թատերախումբի մը կողմէ այնտեղ տրուած ներկայացման մը միջոցին։

ԴԵՂԱԳՈՐԾ Լեւոն էֆէնտի Կիւմիւշեան, հաստատեալ Պոլսոյ Ագսէրայ թաղը՝ պահականոցին հանդէպ, որ իրեն դիմող աղքատաց ձրիաբար դեղ կուտայ՝ Վեհ. Սուլթանին համար բարեմաղթութիւններ ընելու նպատակաւ, այսօր ալ, Ն. Կ. Վեհափառութեան գահակալութեան տարեդարձին առթիւ, իր դեղարանը դիմող աղքատաց դեղագիրները ձրիաբար պիտի պատրաստէ՝ իբրեւ արտայայտութիւն մը իր հաւատարմական զգացմանց։

(Սաադէթ)

ԳՐԱՏՈՒՆ. — Բ. Դրան պարտէզին մէջ կառուցուելու վրայ եղող գրատան դրանը վրայ երեք օսմանեան զինանշանը դետեղուեցաւ։

Բարձր. Մեծ-Եպարքոսն երէկ իրիկուն Բ. Դուռնէն վերադառնալուն նոյն գրատունը այցելեց։

ԱՆԱՏՕԼՈՒԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ. — Էսկի Շէհր-Գօնիայի նոր գծին՝ Էսկի Շէհր-Քէօթահիայի առաջին մասին շինութիւնք աւարտելու վրայ են և երկաթները կը հաստատուին, այնպէս որ այդ մասը պիտի կրնայ բանիլ դեկտեմբերի սկիզբը։ Ցառաջիկայ տարւոյ սկիզբը պատրաստ պիտի ըլլայ Քէօթահիա-Հիւյէմ մասը, որով ընդամենը 255 քիլոմեթր երկաթուղի շինուած պիտի ըլլայ։

—Այն դրամատուները որոնք Անատոլուի երկաթուղւոյ մենաշնորհը Պ. Քաուլայի տրուած պահուն կանխավճար մը բրած էին ելմտական գանձուն, քոնվերսիօնի ծրագիր մը ներկայացուցած են կայս. կառավարութեան։

ԱՄԵՐԻԿԵԱՆ դեսպան Պ. Թէրրէլ նախընթաց իրիկուն Թարապիայի Բեզալա պանդոկին մէջ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ Լոնտոնի ամերիկեան դեսպան Պ. Թոմաս Պայարտի որ մայրաքաղաքս կը գտնուի։ Սեղանին ներկայ էին նաև անգլ. դեսպան Սըր Ֆիլիփ Քըրրի՝ ընտանեօք, ռուսական դեսպան Պ. Նէլիտօֆ, գերմանական դեսպան Ռատոլին իշխանն՝ իշխանուհիին հետ, մայրաքաղաքս գտնուող քանի մը անգլիացի հիւրեր՝ Լորտ Ուոլսլէյ, Լորտ Բորթմութ, Լորտ Բէլ, Սըր Ճօն Բենտեր, զօրավար Սըր Էվլին Վուտ և ուրիշ հրաւիրեալներ։

ՊԷՐՈՒԹԻ և Դամասկոսի միջև շինուելու վրայ եղող երկաթուղւոյն՝ Լիբանանէն անցնող մասին վրայ 240 մեթր երկայնութեամբ փապուղի մը շինուած է և այժմ անոր մէջ երկաթեայ գծերու դետեղումը կը կատարուի։

ՊԷՇԹԱՅԻ մէջ գումարելի միջազգային առողջապահական համաժողովին օսմանեան պատուիրակ զինուորական բժիշկ գնդապետ Ծայրէտտին պէյ և գեր-գնդապետ Մահմուտ պէյ երէկ իրիկուն Պէշթա ուղեւորեցան արեւելեան ճեպընթաց կառախումբով։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ նախարարութեան կողմէ Եւրոպա յանձնարարուած գործիներն որոնք պիտի ծառայեն պտուղներ ու բանջարեղէններ պահելու, հասած են և պիտի զրկուին Պրուսայի ու Էնկիւրիի նահանգներն որոնք համբաւաւոր են իրենց առատ ու ընտիր պտուղներովը։ Երկրագործական Նախարարութիւնը հիմայ այդ գործիներուն միջոցաւ փորձեր կատարել կուտայ եղանակին պտուղներով ու բանջարեղէններով։

ՋՈՒՐԲԵՐՈՒ ճամբայները [illegible] համար կազմեալ յանձնաժողովին անդամ կարգուած է նաև Զինուորական Քննիչ Յանձնաժողովոյ անդամներէն Միրլիվա Իպրահիմ փաշա,

ԲԺՇԿԱԿԱՆ վարժարանի քաղաքային ճիւղին շրջանաւարտներու քննութիւնը վաղը պիտի սկսի ։ Վարժարանին դասախօսութիւնք պիտի սկսին սեպտեմբեր 3 ին ։

ԹՈՒՂԹԻ ԹԷ ՀԱՄԱՐԱԿԱՑ ՍԵՂԱՆ

Շիրքէթի վարչութիւնը կը ներէ՞ որ պզտիկ հարցում մը ուղղենք հրապարակաւ, —առանց ո՛ր և է քննադատութեան միտումի, — պարզապէս լուսաբանուելու համար թէ իր շոգենաւներու քամարայի սրահին մէջ դրուած սեղանները հասարակա՞ց են, թէ ոչ մասնաւորապէս կը պատկանին Թուղթ խաղացողներուն ։ Այս հետաքրքրութեան շարժառիթ եղաւ՝ երէկ առաւօտ ժամ 1 ին Եէնի-Մահալլէէն մեկնող Թիւ 40 շոգենաւին մէջ պատահած միջադէպ մը, —ինքնին շատ աննշան ու աննշմարելի, որ սակայն կրկնուելով՝ կրնայ կարեւորութիւն առնուլ։ Այդ շոգենաւի քամարայի սրահին մէջ կը գտնուէին մեծ ու փոքր երկու սեղաններ ։ Առաջինին վրայ, Պէօյիւքտէրէի ուղեւորներէն երեք զոյգեր պէզիկի նստած էին . իսկ երկրորդին վրայ, երիտասարդ մը գիր գրելու զբաղած էր, առանց նշմարելու բացը մնացած քանի մը զոյգերու անձկագին նայուածքները որոնք կուղղուէին իր վրայ ։ Խահուէճին քանի մը անգամ անցաւ դարձաւ այդ պզտիկ սեղանին շուրջը, առանց համարձակելու դիտողութիւն մը ընել, բայց լռելեայն հասկցուց՝ խաղի թուղթերն ու նիչերը դնելով սեղանին վրայ, և յաւելուածական աթոռ մը՝ անոր առջև։ Գրողը իր գործը կը շարունակէր, երբ յանկարծ իր դէմը կեցած տեսաւ վաճառական մը, —երկրաշարժին պատճառաւ Կղզիներէն Վերին Վոսփոր ապաստանող դասակարգէն, — որ քաղաքավարութեամբ հարցուց թէ կրնա՞ր սեղանը իր տրամադրութեան ներքև դնել։ Երիտասարդը պատասխանեց թէ «ի յարգանս ձեզի ու ձեր խաղակցին որ ծանօթ էք, կը թողում ահա, բայց եթէ օտարական մը ըլլայիք՝ իրաւունք չունէիք սոյնպիսի առաջարկ մը ընելու զոր կը մերժէի»։ Եւ կիսատ թողլով իր աշխատութիւնը, անցաւ քանաքէին վրայ։ Բայց խօսակցութիւնը շարունակուեցաւ քանի մը վայրկեան իր և վաճառականին միջև, որ անգամ մը սեղանին տէր ըլլալէ ետք, ըսկսաւ փաստաբանել թէ Կղզիներու շոգենաւերուն մէջ սեղանները միմիայն Թուղթի յատկացուած են, թէ անշուշտ նոյնը ըլլալու է նաև Վոսփորի վրայ, և այլն։

Առիթէն օգուտ քաղել չեմ ուզեր յաւիտենական գանգատը ուղղելու համար, թէ առաւուան ժամ 1ը շատ կանուխ չէ՞ թուղթի նստելու։ Զբօսանքի ընտրութեան կամ ճաշակի խնդիր է, որ այս նամակի սահմանէն դուրս կը մնայ։ Բայց շահեկանութենէ զուրկ չէր ըլլար գիտնալ որ եթէ նոյն քանը պատահի ուրիշ անգամ, մանաւանդ անծանօթներու միջև, պէզիկի պատրաստուող ուղեւոր մը իրաւունք ունի՞ սեղանին քովէն հեռանալու հրաւիրել ուրիշ ուղեւոր մը որ թուղթ խաղալէ աւելի կարեւոր աշխատութիւն մը կունենայ իր ձեռքը աւարտելիք,

* * *

Գաւառական լուրեր

ԷՏԻՐՆԷ, 16/28 օգոստոս

Օրթագիւղի Հոփփիմեանց վարժարանի նախկին շրջանաւարտներէն և քաղաքիս համանուն վարժարանի ուսուցչուհի Օր. Մառի Երամեան հողին յանձնեցինք քանի մը օր առաջ։

Օր. Երամեան, տեղւոյս Արշ. և Հռիփ. վարժարանաց ամբողջ պաշտօնեաներուն հետ, կարգադրութեամբ Ս. Թորոս եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ՝ յուլիսի 31ին պաշտօնէ դադրեցուցուած էր ցնոր տնօրինութիւն և օգոստոսի 1/13ին ամսաթոշակները ստանալով մինչև մտադիր էր Կ. Պոլիս իր ծնողաց մօտ երթալու, ահա ամսոյս 2/14ին քոլերան կը բռնուի և Թաղապետութեան որոշմամբ բնակած տունը շղթայի ներքև կ'առնուի. տունին մէջ կը մնայ տան տիրուհին և դուրսէն ներս կը դըրկուին մի կին և մի մարդ, որպէսզի հիւանդին դարմանման աշխատին։

Զինուորական բժիշկներէն հազարապետք Ղազարոս, Մինաս, Ռուբէն էֆէնտիք ամեն օր կ'այցելեն, ինչպէս նաև Պօնկովըսքի փաշա. հիւանդը քոլերայի ճիրաններէն կ'ազատի, լաւ վիճակ մը կ'ստանայ։

Հոգաբարձութեան անդամք, ինչպէս նաև Օր. Երամեանի համակրողք ամեն օր անձամբ կ'երթան, դռնէն կը հարցնեն և միշտ գոհացուցիչ պատասխան կ'ստանան։ Բայց, անակնկալ դժբախտութեամբ մը, քոլերայէն ետք թիֆօն վրայ հասած էր։

Ըստ որում տասը օրն ամբողջացած էր, ամսոյս 13/25 ին շաբաթ օր շղթան կը վերցնեն։ Անդին թիֆօն սաստկութեան վերջին աստիճանին հասած էր ։ Ցիշեալ Ղազարոս և Մինաս էֆէնտիք կը հասնին, իրենց ընկերակիցներէն Մուրատեան Զէնոբ և Տէօվլէթեան Ցարութիւն էֆէնտիներն ալ խորհրդակցութեան հրաւիրուելով՝ վճիռ. գէշ է. «տարակուսելի է որ այս գիշերը անցընէ»։ Ցիրաւի, դժբախտ վարժուհին գիշերը չ'անցուց, կէս գիշերէն երկու ժամ յետոյ, 14/26 օգոստոսին, հոգին աւանդեց, հեռու մայրական և ընտանեկան ամեն մըխիթարանքէ։

Մինչդեռ համակրողք և ծանօթք եղելութեան անտեղեակ՝ պատրաստուած էին առաւօտուն անոր անուան տօնախմբութիւնը շնորհաւորելու, իրենք զիրենք անշունչ մարմնոյ մը առջև կը գտնէին։

Ողբացեալ Օրիորդին յուղարկաւորութեան հանդէսը Ս. Աստուածածնայ կիրակի օրը տեղի ունեցաւ յետ միջօրէի ժամ 2ին։ Դագաղն հանդիսաւոր կերպով տանէն Ս. Թորոս եկեղեցին փոխադրուեցաւ, որ եկեղեցական Հարց կարգադրութեամբ՝ պատշաճ կերպով լուսազարդուած էր. յուղարկաւորութեան ներկայ էին Ս. Թորոս և Ս. Կարապետ եկեղեցեաց քահանայից դասն և դպրապետք. եկեղեցւոյ մէջ Գեր. Առաջնորդն հանդէսին կը նախագահէր։ Եկեղեցական արարողութեանց աւարտումէն յետոյ դագաղը խուռն և ընտիր բազմութեան ուղեկցութեամբ առաջնորդուեցաւ մինչև Միխալ Քէօբրիւ և անկից մեռելակառքով գերեզմանատուն փոխադրուեցաւ։

Յուղարկաւորաց մէջ էին Ս. Թորոս եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ ատենապետն և մի քանի անդամները, ինչպէս նաև Արշ. և Հռիփ. վարժարանաց Հոգաբարձութեան բոլոր անդամք, որք մինչև գերեզմանատուն կառքով դագաղին հետեւեցան։

Ըստ որում հեռագիր քաշուած էր հանգուցելոյն ծնողաց, Ս. Թորոս եկեղեցւոյ աւագերէց Տ. Մկրտիչ Հօր կողմէ մեռելական աղօթքները կատարուելէ յետոյ հարկ տեսնուեցաւ հանգուցելոյն մարմինը գերեզմանատան սենեակներէ միոյն մէջ պահել և թաղումը մեռելոցի օրուան յետաձգել, որ և կատարուեցաւ ստուար բազմութեան մ'առջև, իւր խեղճ մօր քաղաքս հասնելէն յետոյ։

Ս. Թորոս եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդն, Արշ. և Հռիփ. վարժարանաց Պատ. Հոգաբարձութիւնն և տիկին Վիրգինէ Յ. Մէնդիլճեան ծաղկեփունջեր նուիրած էին ողբացելոյն դագաղին։

Այս անակնկալ մահը քաղաքիս ամբողջ հայոց մեծ վիշտ և խորին կսկիծ պատճառեց, զի օրիորդ Մառի Երամեան այն մեր գիտցած հասարակ ուսուցչուհիներէն չէր։ Նա իւր ստանձնած պաշտօնը կատարեալ կարողութեամբ ի գլուխ հանելու համար համբարեալ պաշար ունէր. ուսման սիրահար էր, իր ծրագրէն դուրս էր նորաձեւութիւն, զբօսանք ևն. աշխարհային ամեն վայելք՝ կարդալու մէջ կը գտնէր, այս ձիրքերուն միացած էր նաև կատարեալ կրթութիւն, պարկեշտութիւն, պարզութիւն, պարտաճանաչութիւն և քաղաքավարութիւն զոր կը հաստատեն նաև իւր վերջին ճգնաժամին մէջ դարմանող պատ. բժիշկք եւս։

Ողբացեալ օրիորդը դեռ հազիւ քսան գարուններ անցուցած էր։ Պաշտօնավարած էր Նիկոմիդիոյ, Կէտիկ փաշա Սպանդարեան վարժարանի և 7½ ամսոյ չափ Էտիրնէի մէջ. իր այս տարիքին մէջ յաջող քննութիւն մ'անցնելով ուսուցչական վկայականի ալ արժանի դատուած էր։

Կ. ԲԱՆԹԻԿ

ԱԶԴ.—Պատուաւոր երիտասարդ մը կը փափաքի վաճառականի կամ յանձնակատարի և փաստաբանի քով ծառայութեան պաշտօն վարել. լաւ երաշխաւորութիւն. դիմել Արեւելքի խմբագրութեան։
98 1—3

Աստի անտի

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Պ. ՄՈՒՆՏԻԻ

Պարոն Եարոմիր Մունտի, հանրածանօթ մարդասէրն ոչ միայն բովանդակ Եւրոպիոյ, այլ և մանաւանդ Թուրքիոյ մէջ, անձնասպան եղաւ ի Վիէննա, ատրճանակի հարուած մը տալով իւ քունքին։

1822 ին ծնած էր Մորավիոյ մէջ. որդին էր Պարոն Ժան Մունտիի և Իզապէլ Քալնոքի կոմսուհիին։ Ծնողքն ուզեցին եկեղեցական ասպարէզին մէջ մտցունել զինքը, բայց ինք տղայ հասակէն անդիմադրելի ճաշակ մը կը զգար բժշկութեան համար. որովհետև թոյլ չի տրուեցաւ իրեն իր միտումին հետեւիլ բանակը մտաւ։ 32 տարու եղած ատենը երբ հարիւրապետ էր, գնաց Վիւրցպուրկի բժշկական համալսարանը մտաւ, ուսկից երկու տարիէն ելաւ բժիշկի վկայականն առած։ 1859ի Իտալիոյ պատերազմին ատենը բանակին մէջ ծառայեց իբրև առողջապահական բըժիշկ։ Պատերազմէն ետք, նախ դարմանատուններու բարեփոխումը ուսումնասիրեց և 1867ին իր ծախքովը տիպար—յիմարանոց մը հաստատեց Փարիզի ցուցահանդէսին մէջ։ 1868ին պաշտօն տըրուեցաւ իրեն վերակազմել Աւստրիոյ զինուորական առողջապահական դրութիւնը. 1866ի պատերազմին ատենը շարժուն հիւանդանոցներ վարեց ի Պոհեմիա։ 1870—71ին, Փարիզի պաշարման ատենը, շարժուն հիւանդանոցներու տեսուչ եղաւ։ 1876ին Կ. Պոլիս եկաւ Կարմիր Մահիկին (Քըրմըզը Հիլալ) հիւանդանոցները վարելու համար։ Վերջին պատերազմին մէջ իր մարդասիրական ծառայութիւններովը սիրելի եղաւ Արեւելքի ժողովրդոց։ 1881ի դեկտեմբեր 8ին Վիէննայի մէջ պատահած սոսկալի հրդեհէն ետք, ուրիշ մարդասէրներու հետ հիմնեց «Շարժուն հիւանդանոցներու կամաւոր ընկերութիւնը», որուն բարեբաստ արդիւնքին վրայ Եւրոպիոյ գըրեթէ բոլոր մեծ քաղաքներուն մէջ նմանօրինակ հաստատութիւններ հիմնուեցան։

Պ. Մունտի բազմաթիւ գործեր հրատարակած է առողջապահութեան վրայ ֆրանսերէն, անգլիերէն ու գերմաներէն լեզուներով։ Գրեթէ ամեն կառավարութեանց կողմէ զանազան պատուանշաններ ստացած էր։

Անբուժելի հիւանդութիւն մը զինքը մղած է այս յուսահատական արարքին, մարդասիրական գործերով բեղմնաւոր կեանք մը փակելով այսպէս։

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԷ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆՔ

Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձի գիշերը Վոսփորի մէջ կատարելի լուսավառութիւնները տեսնել փափաքողներուն համար Շիրքէթի Խայրիյէի վարչութիւնը գիշերային հետեւեալ երթեւեկութիւնները կատարել պիտի տայ իր շոգենաւերուն.

Կամուրջէն Վոսփոր

Ժամ	Ր.	
1	34	Կամուրջէն Սկիւտ. Պէյլէրպէյ, Արնաւուտքէօյ, Պէպէք. Ռ. Հիսար։ Էմիրկէնի առջև պահ մը կենալէ յետոյ Մէզարպուրնը ու Եէնիմահ., ուրկէ ժամը 3 ½ին պիտի մեկնի և միւնոյն նաւամատոյցներէն մտնելով Կամուրջ պիտի վերադառնայ։
1	27	Սկիւտարէն կամուրջ և անկից մինչև Էմիրկէնի բացերը. ժամը 4ին վերադարձ Սկիւտար և յետոյ կամուրջ։
1,45	32	Կամուրջէն Պէօյիւքտէրէ ու Մէզարպուրնը, Վոսփորի մէջտեղերը կենալով։ Ժամ 4 ին Մէզարպ.էն Պէօյիւքտ. եւ յետոյ կամուրջ։
		Վոսփորէն Սէրայ Պրունը
1	18	Եէնիմահ. Մէզարպ. Պէօյիւքտ. Թարապիա, Պէյքօզ, Եէնիքէօյ։ Այս շոգենաւ Սարայ Պրունի առջև պիտի կենայ և ժամ 4 ին ճամբայ պիտի ելնէ ու նոյն նաւամատոյցներուն մտնելով Եէնիմահալլէ պիտի դառնայ։ Շոգենաւին ետեւի կողմը կանանց յատուկ է։

Տոմսակաց գինները երթ ու դարձի համար առաջին կարգ՝ տասնըչորս ղր. եւ երկրորդ կարգ՝ տասը ղրուշ։ Տղայոց համար կէս տոմսակ։ 2—2

ՄԷՇՏՈՒՏՃԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ

Տղոց և Աղջկանց Գիշերօթիկ

Կ'ընդունուին գիշերօթիկ և ցերեկեայ աշակերտներ և միայն ցերեկեայ աշակերտուհիներ դիւրամատչելի պայմաններով։

Կէտ առ կէտ գործադրելով դպրոցական յայտագիրը որ փորձառութեամբ և ժամանակին պէտքերուն համեմատ կազմուած է, վարժարանը հիմնական կերպիւ կ'աւանդէ հայ. օսմ. ֆրանս. և անգլ. լեզուները, առեւտրական գիտելիք և պէտք եղած բոլոր նախնական ու երկրորդական ուսումները։

Ուսուցչական մարմինը, առանց բացառութեան, բաղկացած է առաջնակարգ և վկայեալ ուսուցիչներէ, որք կը դասախօսեն կրտսերագոյն կարգերէն սկսեալ մինչև ութերորդ տարին։

Աղջկանց վարժարանը ուրոյն հաստատութիւն մըն է առանձին յայտագրով։

Տնօրէնը ընտանեօք կը բնակի վարժարանին մէջ։ Ուսանողք առ հասարակ ընտանեկան ճշմարիտ խնամք կը վայելեն և կը դաստիարակուին ուղիղ բարոյականի սկզբանց մէջ, ինչ որ անտարակոյս ամեն կրթական հաստատութեան աւագ պարտականութիւնն է։

Նոր տարեշրջանը կը սկսի սեպտ. 1ին։ Մանրամասնութեանց համար դիմել ի վարժարան, Եէնի-Գաբու, Փափազեան Ամիրայի Ծովեզերեայ ապարանքը։

Հիմնադիր-Տնօրէն
Գ. Պ. ՄԷՇՏՈՒՏՃԵԱՆ

81 1—4

ԸՆԹԱՑՔ ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ
ՏԱՃԿԱԽՕՍ ՀԱՅՈՑ

Երկրորդ վարժութիւն
ՄԱՆԿԱՆՑ

Երրորդ տպագրութիւն յաւելեալ եւ բարեփոխեալ
Վաւերացեալ Մ. Մաարիֆէն եւ Ազգ. Ուսմ. Խորհրդէն
ԳԻՆ 3 ԴԱՀԵԿԱՆ

Կեդրոնատեղի—Թիւ 11 Գազասքէր խան, գրասենեակ ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆԻ Թիւ 59 3—10

Աղլիսի գործարանատէր Եղիա էֆ. Շահպազեան, ի դիւրութիւն իւր բազմաթիւ յաճախորդաց, գրասենեակ հաստատած է Ղալաթիա, Գարաքէօյ, Եէնի-Խան թիւ 11, 12 ուր կը գտնուին շինութեանց վերաբերեալ մեքենայի եւ ամեն տեսակ աղիւսներու օրինակներ։ Գիներն յոյժ գոհացուցիչ, հանդերձ վճարմանց դիւրութեամբ։ 37 12—30

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ
ԵՒ
ԳՐԱՏՈՒՆ

Գ. Պաղտատլեան

ՑՈՒՑԱԿ ԳՐՈՑ

ՀԱՆԴԵՐՁ ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ

Գրատունս երկրորդ անգամ ի լոյս ընծայած է սոյն գեղեցիկ եւ սիրուն Գրացանկը ուր ամփոփուած է․

Ա. Իրեն սեպհական գրքերն, որոց պարունակութեան մասին կուտայ ուրոյն պիտանի ծանօթութիւններ իրենց գներով։

Բ. Հրապարակի վրայ յաճախեալ դպրոցական, գիտական, գրական եւ այլ ամեն տեսակ գրոց ճոխ ցանկ մը իրենց գներով։

Գ. Պաղտատլեան գործատան այն է՝ Տպարանի, Վիմագրատան, Կազմատան եւ Գրատուն-Թղթավաճառանոցի վերաբերեալ տեղեկութիւններ։

Դ. Համայն Թուրքիոյ Թղթատարութեան սակագնոց մասին կարեւոր գիտելիք, ուր միառմի ցուցուած է Նամակներու, Թղթերու, Դրերու, Նմոյշներու եւայլ եւայլ Ապահովագրեալ պահմանեալ փոխագրութեան գիներ հեռաւորութեան շրջանակաց համեմատ։

Ե. Հեռագրական կանոնագիր եւ սակագին համայն Թուրքիոյ։

Զ. Համեմատական արժէք օտար դրամոց։

Է. Դրոշմաթղթի կանոնագիր եւ ցուցակը գնոց ըստ վերջին 1894 տարւոյ տրամագրութեան։

Ը. Մշտնջենական Օրացոյց դիւրըմբռնելի ու պարզ աղիւսակի մը վրայ կը բացատրուի 1600էն մինչև 2400 տարիներու ամսաթիւերն ու օրերը։

Թ. Դրացուցակիս Ա. տպագրութիւնը ինչ ինչ կարեւոր գիտելիքներ պարունակելուն պէտք ունեցողներուն կողմէ [illegible] օրինակներն սպառ [illegible] մէջ, ուստի այս անգամ պատրաստուեցաւ 2 ղրշ. գին [illegible]

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

19/31 Օգոստ. 1894

Այսօր Վեհ. Սուլթանի Գահակալութեան տարեդարձին առթիւ Ղալաթիոյ Պորսան գոց է։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ՓԱՐԻԶ 30 Օգոստ.		
Քոնսոլիտ Օսմ. B Կնսկ. Ֆր.	40	25
» » C » »	28	05
D (Բացուած »	25	62
(Գոցուած »	25	65
Ռումելիի Երկաթուղի »	127	—
Բրիորիդէ »	488	75
Մաքսային Պարտաթուղթ »	504	37
[illegible]ամանիյէ »	459	37
Ռէժիի Բաժնեթուղթ »	448	12
Պանք Օթոման (անուանկն.) »	644	06
Ռանթ Ֆրանսական 3% »	103	87
» » 3 ½% »	108	37
» Իտալական »	82	70
Քրէտի Լիոնէ »	748	75
Քրէտի Ֆոնսիէ »	900	—
Քոնդուառ տ'էսքոնդ »	506	25
Սուէզի Բաժնեթուղթ »	2825	—
Եգիպտական Միացեալ »	522	50
Չէք Լոնտոնի վրայ »	25	190
ՎԻԷՆՆԱ 30 Օգոստ.		
Ռումելիի Երկաթուղի Ֆիորին	67	60
Օսմ. Ռէժի »	219	50
Փոխանկ. Լոնտոնի վրայ ի տես	124	75
« Փարիզի » »	49	35

ԼՈՆՏՈՆ 30 Օգոստ.		
Քոնսոլիտ Օսմանեան A Ա. Ո.	64	—
» » B »	40	25
» » C »	27	75
D (Բացուած »	25	37
(Գոցուած »	25	31
Օսմ. Փոխառ. 1871ի (Փոփոխեալ)	98	50
Փոխառ. 1877 (Տիֆէնս Լօն)	103	50
Պանք Օթոման (վճարեալ) »	15	62
Այտընի Երկաթուղի »	12	—
Գասապայի » »	——	—
Միացեալ Եգիպտական »	103	62
Աւանդնաշնորհեալ »	——	—
Անգլ. Քոնսոլիտէ »	102	68
Ռանթ Հելլենական 5% »	32	50
» » 4% »	36	50
Պուլկար. Փոխառ. 6% »	85	50
» » Նոր 6% »	100	50
Փոխանկ. Փարիզի վրայ 3 ամիս	25	300
ՊԵՐԼԻՆ 30 Օգոստ.		
Օսմ. Փոխառութիւն 1883ի Մարք	99	20
Ռումելիի Երկաթուղի »	111	90
Անատոլուի Երկթղ. ¼ Պրթղթ. »	93	20
Փոխանկ. Լոնտոնի վրայ 3 ամիս	20	335
» Փարիզի » 2 ամիս	80	75

ԴԱՐԹԱԼԵԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

Վաւերացեալ Ազգ. Կեդր. Ուսումնական Խորհուրդէն

ԱՌԱՋՆՈՐԴ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԻՆ 3 ՂՐՈՒՇ

Դասագիրք Թուաբանութեան Ա. տպագրութիւն գին 7½ ղրուշ։

Սոյն երկու Թուաբանութիւնք որք կը գործածուին Կ. Պոլսոյ և գաւառներու Ազգ. վարժարանաց մեծագոյն մասին մէջ, հրապարակին վրայ գտնուած ամեն Թուաբանութիւններէն օգտակար են հայ ուսանողութեան, ըստ կարծեաց Կ. Պոլսոյ Պատուարժան ուսուցչաց ոմանց։

Առաջնորդ Թուաբանութիւնը, յատկապէս մանկանց համար պատրաստուած, շատ դիւրուսոյց է, իսկ դասագիրք Թուաբանութիւնը, օգտակար է մանաւանդ չափահաս աշակերտաց, և կը պարունակէ չորս գործողութիւնք ամբողջական և կոտորակ թուոց, համեմատութիւնք, հըղբայի կանոն, մեթրական դրութիւն, ընկերութեան կանոն, յարակցութիւնք, տոկոսք պարզ և բաղադրեալ, հաշուընթացք, դեղչք ներքին և արտաքին եւայլն։ Իւր 800 խնդիրներն հրապարակին վրայ գտնուած Թուաբանութեանց խնդիրներէն լաւագոյն են։

Կը գտնուի ամեն գրավաճառաց քով։
31 6—12

Ընդդէմ դժուարամարսութեան.—Շաւէնի Գինի։

ՍՊԻՏԱԿ ՄՈՒՌԻ ՃԻԱՆ ՕՇԱՐԱԿ

Եըլտըզ, Կ. Պոլիս, 13 դեկտ. 1888

Պարոնայք Սգող եւ Պօսէն,

Կը ցաւիմ որ պաշտօնական դիրքովս կարող եմ փորձեր ընել, այլ համաձայն ուրիշներուն փորձերուն եւ այն բժշկաց որոց պաշտօն յանձնեցի փորձել զայն մեր հիւանդանոցաց մէջ, կը յայտարարեմ որ ձեր Մորիւ ձկան իւղն իր այդ վիճակին մէջ զիրար խմուելով եւ մարսուելով, կը համապատասխանէ այն յատկութեանց զորս ախտաբուժական գիտութիւնն ի վաղուց անտի դըլուած է, մասնաւորապէս այդ յաջող պատրաստութեան մէջ։ ՏՐ Ս. Ս. ՄԱՎՐՈՅԵՆԻ ՓԱՇԱ
Բժիշկ Վեհ. Սուլթանի

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅԻ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսայի շահանէճէ ալընաճագ լահմ վէ միւթէֆէրրուաթըընըն աղուսթոսը րումինին 23ինճիւ սալը կիւնիւ գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն թալիպ օլանլարըն եէվմը մէզքիւրտէ սաաթ 6տան նիհայէթ 9ա գատար Խազինէի ճէլիլէի միւշարիէյհաեա կէլմէլէրի իլան օլունուր։

17 աղուսթոս 310 2—3

ԻԼԱՆ ՊԱՊԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Տայիրէի ասքէրիյէ ազարաթընտան Լանկատա Ջարշը-պաշընտա վագը գարագօլխանէ արսասը սիմ մէճիտիյէ 19տան չէհրի 200 վէ Այվանսէրայ գաբուսը խարիճինտէ վագը պազգալ տիւքքեանը լիրայի օսմանի 100 ղրշ. տան 70 ղրշ. տա թալիպի էօհտէսինտէ օլուպ աղուսթոս նիհայէթինէ գատար ֆիյաթըը պուլունտուղը հալտէ իհալէսի իճրա օլունաճաղընտան գամիլէ իհթիճարէ թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի մուհասէպաթ տայիրէսի շուպէի մախսուսընա միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։ Նօ. 53 1—3

Շամը Շէրիֆտէ պուլունան ասաքիրը շահանէ իչուն մահալլինճէ մէվճուտ միւնագասայա գօնուլան նոհուտ վէ սապունուն պուրաճա իթասընա թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։
Նօ. 54 1—3

Միւպայաա օլունաճաղը էվվէլճէ իլան գըլընան 1000 սանտըգ Պաթում կազընըն պէհհէր սանտըղը 22 ղրշ. 10 փարատա թալիպի էօհտէսինտէ օլուպ իշպու աղուսթոսը րումինին 22ինճի բազար իրթէսի կիւնիւ գարարը գաթիսի վիրիլէճէկի վէ իրթէսի կիւնիւ 100տէ 5 թէնզիլի գապուլ օլունաճաղը ճիհէթլէ իթասընա թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթը տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։
Նօ. 55 1—3

ՓՇՕՐ ՊՐԱՈՒ

ի Միւնխէն, Պավիէռ

հայթայթիչ Գերմանիոյ կայսր ու Բրուսիոյ թագաւոր Վիլհելմ Բ.ի

Պաւիերայի գարեջուր, Կ. Բշորի գարեջրատան Առեւտրական Խորհրդական

Աւստրիոյ-Հունգարիոյ թագաւոր կայսեր և Պաւիերայի խնամակալ իշխանին։

Առաջնակարգ գարեջուր Պաւիերայի, ուրիշ ամեն գարեջուրներէն գերիվեր, բոլորովին զուտ, համեղ և զովարար ըմպելիք, ամեն եղանակներու յարմար, ճանչցուած և յանձնարարուած նշանաւոր բժիշկներու կողմէ։

Գարեջրատունը 1820 ին հաստատուած է. ինք առաջինը եղաւ որ 1854 ին սկսաւ գարեջուր արտածել շիշերով։

Տարեկան արտադրութիւնն է 600,000 հեկտոլիտր։ Կեդրոններ Գերմանիոյ և Զուիցերիոյ բոլոր մեծ քաղաքներուն մէջ, ի Լոնտոն, Փարիզ, Հավր, Ռուէն, Պրուսէլ, Լիէժ, Անվէրս, Ամստերտամ, Հաակ, Ռոթերտամ, Միլան, Հռոմ, Վիեննա, Նիւ-Եորք եւայլն։

Միտալներ և վարձատրութիւններ՝ Միւնիխի (1854), Քէօլնի (1865), Փարիզի (1867), Վիեննայի (1873), Հակենաուի (1874), Ֆիլատելֆիայի (1876), Նիւրէնպերկի (1882, ոսկի միտալ), Ամսթերտամի (1883, ոսկի միտալ), Պրուսէլի (1888, ոսկի միտալ և պատւոյ վկայագիր), Մելպուռնի (1889, առաջնակարգ արժանեաց չքադրամ պատւոյ յիշատակութեամբ) ցուցահանդէսներէն։

Բշոր Պրաու գարեջուրը կը վաճառուի հետեւեալ գարեջրատուններ.

Կապրինուս, որ կը բանեցունէ Տիւոլի Ֆրիանտոյամիօ, Բերա Մեծ-Փողոց, 312, Քոնքորտիային դէմը։

Թեբէ—Պաշըի պարտէզը.

Տէմիրճեանօղլու եղբարց քով, Բերա, Մեծ-Փողոց, Ռուսական դեսպանատան դէմ, Թիւ 430։

Բոլոր Արեւելքի համար միակ ներկայացուցիչն և շիշով գարեջուր վաճառողն է

« Փշոր Պրաու »
Վիլհէլմ Բալուքա
Պազար Ալման 388

Բերա Մեծ-Փողոց, 388 26 15—78

Ա. ԱԼԷՄԵԱՆ—Գ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԿ.
49—52 Կ. ՊՈԼԻՍ ԹԱՀՄԻԶ ՓՈՂՈՑ 52—49
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ ԵՒ ՇԱՔԱՐԵՂԻՆԱՑ

ΑΒΕΔΙΣ ΑΛΕΜΙΑΝ & ΚΕΒΟΡΚ ΧΟΒΝΑΝΙΑΝ
Κ/ΠΟΛΙΣ ΟΔΟΣ ΤΑΧΜΙΣ 52
AVEDIS ALEMIAN & KEVORK HOVNANIAN
STAMBOUL RUE TAHMIS 52
MARQUE DEPOSE
Ի Կ. ՊՈԼԻՍ
Ա. ԱԼԷՄԵԱՆ ԵՒ Գ. ՅՈՎՆԱՆԵԱՆ
Թահմիզ փողոց 52

Զինաստանէն և Ցէյլանէն հասած են և հետզհետէ կը հասնին նոր տարուան բերքերէն ընտիր թէյեր որոնք կը ծախուին մեր 52 թիւ վաճառատան մէջ։ Իսկ նոր պայմանագրութեան մը համաձայն՝ 49 թիւ վաճառատան մէջ անմրցելի աժանութեամբ կը վաճառուին անգլիական և ֆրանսական հազարումէկ տեսակ ընտիր շաքարեղէններ, հռչակաւոր Հիւնթլէյ-Բալմէր, Բէք-Ֆրէյն և ուրիշ ականաւոր գործարաններու թարմ պիսքիթներ, ֆրանսական [illegible]։ Նաև տեղական շօքօլա որ Անգլիոյ մէջ իսկ մեծ համբաւ շահած է։ Ընկերութիւնս մասնաճիւղ մ'ալ ունի Պահճէ-Գաբու Մաքսատան նոր գաւիթ թիւ 14։ 10 17—60

ՌՈՍԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

1881 Մարտ 20ին կայսր. հրամանաւ արտօնեալ
Ընկերութեան կեդրոնատեղին Բեթերսպուրկ
Ընկերութեան ապարանքը, Մեծ Մարսքիա 37
Ապահովագրութեանց ճիւղեր ՀՐԴԵՀ.—ԿԵԱՆՔ.—ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ.—ԱՐԿԱԾՔ

Ընկերային դրամագլուխ ամբողջովին վճարուած	4.000.000 րուպլի
Երաշխաւորութեան գումար	55.000.000 Ֆրք.
1893ի հասոյթք	20.500.000 »
1881էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է մօտ	70.000.000 »

Ընդհ. Գործակալ Թուրքիոյ համար ՊՕՂՈՍ ԱԻԳԵՐ
Պոլիս Ճէլալ Պէյ խան, Թիւ 22, 23

Ֆէնիք Ընդհ. Գործակալութեան
Ա. ՀԻՒՐՄՈՒԶ

Մանմահեւդ Ղալաթիա, Չէօմլէքճի փողոց, 14
Գրասենեակ Ս. Ժ. ՌԷԲՐԷՆ ԵՒ ԸՆԿ. 1010

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1.000,000

«ՖԻՆԻՔՍ»

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ՚է որոյ բաժնետարք Անգլիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 53

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ՚ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծական՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ սոյն [illegible]վագրելոյս, որք ունին լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու ծովեզերաց Ղալաթիա, Պանք Օթոմանի վարի քովը ի Վիթալիս խան, գետնայարկ Թիւ 1։

ԻԼԱՆ ՊԱԳԸ ՍԷՐԱՄՓԷՐԻ

Չինճի Փըրգայի հիւմայունա մէնսուպ ալայ վէ Թապուր բիար էֆրատը միւլքիքեանէսի իչիւն 310 սէնէսինտէ լիզիւմը օլուպ միւպայիա օլունաճագ 15,000տէն 20,000 չիֆթէ գատար իմամ խիր երին չօրապըն պէհէր չիֆթի նիմ մէճիտիյէ 19 գրշ. հիսապը իլէ 90 փարայա Թալիպի եօհտէսինտէ օլուպ գարարը գաթիյի վիրիլէճէյէ գատար նումունէսինի կէօրմէք վէ շէրայիթինի անլամագ իչին տալը վէ ճումա իրթէսի կիւնլէրի Փըրգայի հիւմայուն իմալաթխանէսինէ միւրաճաաթ իյլէմէլէրի իլան օլունուր։ Նօ. 50 2—3

Տայիրէի աջքէրիյէ մաթպաասը իչիւն լիզիւմ կէօրինէն 90 սանթիմ թուլ 65 սանթիմ արզընտա վէ սարը րէնք 1ինճի ճինսինտէն 2 խիզլիւ 60 ատէտ լիթօղրաֆ Թաշը միւնագասայա վազ օլունտուղունտան իթայա Թալիպ օլանլարըն շէրայիթինի անլամագ վէ փէյ սիւրմէք իչիւն մազամը վալայի ճէնապը Սէրասքէրի մուհասէպաթ տայիրէսի չուպէի մախսուսէսինէ միւրաճաաթ իյլէմէլէրի իլան օլունուր։ Նօ. 51 2—3

Ֆէս վէ Իզմիտ ֆապրիգայը հիւմայունլարը իչիւն միւպայեա օլունաճագ 300,000 գրէճյի ճէտիտ քիլէ գըրգըմ կէօմլէք ինգարէ վէ էսկիշէհիր մալի Անատոլը խաքալըընըն իթասընա վէ շէրայիթը մուզայէրէսինի անլայուպ փէյ սիւրմէկ Թալիպ օլանլարըն ալըւմ օսը րուզինին։ Չինճի բազար իրթէսի կիւնինէ գատար մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։ Նօ. 52 2—3

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

[illegible] Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի միջեւ

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ և ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Թալէրմօ	3200
Անճէլօ	3000	Կալիլէօ	5500	Բաէուէր	1700
Արօլլօ	5500	Կիդանօ	2200	Բլամօ	1500
Արկօ	2300	Կօզօ	1800	Բօլօ	1000
Արիօսդօ	3000	Կրօտնօ	2200	Քուիդօ	2800
Պասանօ	3000	Հիրօ	2000	Ռիալդօ	4400
Պօրօտինօ	2200	Հիտալկօ	3000	Ռինալտօ	3200
Պրավօ	2000	Հինտու	7000	Ռօլլօ	3000
Պըֆֆալօ	8800	Համպէր	1200	Ռօմէօ	3500
Գէյրօ	2600	Այակօ	5000	Ռօզարիօ	3500
Գալիբսօ	2500	Ճիւնօ	2300	Սալէրնօ	4000
Գամէօ	2100	Քէլսօ	2000	Սանդիակօ	8200
Գազօ	2000	Քօլբինօ	4[illegible]00	Սարֆօ	2000
Գօմօ	700	Քօվնօ	2200	Սիլվիօ	2000
Ձիբակօ	5000	Լէօ	2000	Սօրէնտօ	4300
Դիդօ	5500	Լէբանթօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Դօլօրադօ	3400	Լիվօրնօ	3000	Թուրսօ	1200
Տիզօ	[illegible]500	Մալմօ	1500	Թօլիտօ	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	Թօրփիտօ	900
Տուրօ	1800	Մարգէլլօ	5500	Ուրպինօ	5000
Տրաբօ	2100	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Խայնամօ	[illegible]600	Մուրիլլօ	3100	Եէնօ	3600
Էլտօրատօ	3000	Նէրօ	2000	Զէպրա	1000
Էլլբիրօ	3200	Օրլանտօ	3000	Տրիփոլիթէն	[illegible]00
Տրամէօ	2600	Օթէլլօ	5000	Զրմարօ	200
Ֆալքըն	800	Օզրանօ	4500	Զէրօ	1[illegible]0
Ֆիտօ	700	Օպօրտօ	2000	Մօսքիթօ	1[illegible]0
		Կամպըջըն Մօնարք	8000		
		Բիրմինկըմ Մօնարք	8000		
		Լոգիըն Մօնարք	8100		

Ուղեւորներու համար ամէն դիւրութիւն կ՚ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՌԻՑՕ
Գործակալք
Թիւ 17—18, Քիւչիւք Միլլէթ
39 խան, Ղալաթիա

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՑՆԱԿԱՆ և ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ

Մարսիլիայի և Պաթումի միջեւ
կանոնաւոր [illegible]

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,
Ա. կարգ 245 ֆրանք
Բ. » 175 »

Ուղղակի և արագ ուղեւորութեան Նաւուղիներ, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատար
ԹԻՄՈԹԷ ԲԸՊՈՒԼ
1054 Մումհանէ փողոց Թ. 108



KONIAK
N. MICHIOTI
MARQUE PRIVILÉGIÉE
ΜΗΧΙΩΤΗ
ΕΚΤΟΣ ΣΙΝΑΓΩΝΙΣΜΟΥ
قونياق ميخيوتي
فوق العاده فين شامپانيا
رقابتدن خارج
COGNAC ORIENTAL
Grande Fine Champagne
HORS CONCOURS
Lith. P. Dafflen

Երեք աստղով շիշը 30 ղրուշ, — երեք աստղով 1½ շիշը 15 ղրուշ։ Երկու աստղը շը 18 ղրուշ։ Մէկ աստղով շիշը 12։ [illegible] և փէ-ղօյի շիշը 12 ղրուշ։









ԷՔՍՓՕՌ ՎԷՌՊԱՆՏ

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ
ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՏՈՒՆՆԵՐՈՒ
ԱՐՏԱԾՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԱԿ

Մեքենաներու և գերմանական այարհեստական նիւթերու ցուցադրութիւն ի Ղալաթիա, Բէրչէմպէ Բազար Թիճարէթ խան (Նախկին կեդրոնատեղի Հաւաստի Բէժիի)

Արհեստական, երկրագործական ճարտարապետական, նաւային և այլն, և այլն ՆԻՒԹԵՐՈՒ և ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ ՎԱՃԱՌՈՒՄ։

Տեղեկութիւնք կը տրուին մեքենաներու ամբողջ գործարաններու զետեղման վրայ։

Ցուցադրութեան մէջ կը գտնուի միշտ գեղեցիկ մթերք մը զանազան մեքենաներու, ջրհաններու, խոհանոցի նիւթերու, գերմանական լինոլէօմի և ուրիշ վաճառքներու։ 798











EMULSION SCOTT



(ՍԳՈԴԻ ՕՃԱՌԷՔ)
ՄՕՐԻՒ ՁԿԱՆ ՃԱՐՊ ԻՒՂ
Իփոֆոսֆիթ ով շաղ և սոտով
Պատրաստեալ ձեռամբ ՍԳՕԴԻ և ՊՕՈՒՆԻ, ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մօրիւ ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, Իփոֆոսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճողածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի՝ դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։
[illegible] ի Կ. Պոլիս. ՀԷՆՐԻՔՐ ԵՒ ՀՕՊՔԻՆՍ

ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ

HAMBURG MUNICH UNITED

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	ֆռանք 8,000,000
Պահեստի դրամ	» 8,100,000
Տարեկան հասոյթ	» 19,532,000

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ՚ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք

894 Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսո

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Անանիատիս խան. 12, 13, 14.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԹԷՅԻ

ՀԱՍՏԱՏԵԱԼ ՅԱՄԻՆ 1880

Կ. ՍԱՎՐՈՒԵԱՆ Ց. ԽԻԶԱՐՈՒԼԵԱՆ
THE ECONOMICON
ԹԷՅ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ
ΤΕΙΟΝ ΕΙΚΟΝΟΜΙΚΟΝ
MARQUE DEPOSÉE

Մասնաճիւղ կը գտնուի Օսմանեան ամէն գլխաւոր քաղաքաց մէջ

Թէյի գործածութեան ընդհանրանալովը, թէյի ճաշակն ևս նրբացած է, որով թէյի առեւտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է, որ միայն երկարատեւ և ճոխ փորձառութեամբ կ՚ստացուի։

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ էր բազմամեայ ընդարձակ գործառնութեամբք, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և խիստ մեծաքանակ ընտիր թէյեր Չինաստանի, Ճավայի, Սէյլանի և Հնդկաստանի գլխաւոր արտադրիչներէ. և արդէն հասած են մեզ, և հետզհետէ պիտի ստանանք թէյեր, որք գերընտիր հատուէտութեամբ ամէն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ գներու անհամեմատ աժանութեամբ մեզ մատուցած առաւելութիւնք, մեր տան դէմ մրցումն անկարելի կընեն։

Մեր բազմաթիւ յաճախորդաց պահանջմանց լաւ ևս գոհացում տալու համար ընդարձակած ենք մեր մթերանոցն, ուր ամէն տեսակ ընտիր թէյեր թէ՛ սնտուկներու և թէ՛ այլ և այլ մեծութեամբ տուփերու մէջ մեծաքանակ միշտ պատրաստ կը գտնուին։

Թէ՛ Կ. Պոլսոյ և գաւառաց, և թէ օտար երկրաց մէջ մեր տան ցուցուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ առաւել ևս յարիլ մեր սկզբունքին, որ է [illegible], չափ և գնոյ ճշդութիւն։

Մեր թէյերու առաւելութեանց ապացոյցներէն մին ևս, անոնց բազում կեղծերն հրապարակին վրայ գտնուիլն է, որոց դէմ զգուշանալու համար կը խնդրենք որ միշտ փնտռէք ՄԵՐ ՅԱՏՈՒԿ ՆՇԱՆՆ ու մեր տան հասցէն, Կ. ՍԱՎՐՈՒԵԱՆ, Ց. ԽԻԶԱՐՈՒԼԵԱՆ Ճէլալ պէյ խան Թիւ 10, Պահճէ-Գաբու։ 19

ՏՐՔ. Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

Հաստատեալ	ԱՆԿԼՕ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ	Հաստատեալ
1852	ՊԱՀՃԷ-ԳԱՊՈՒ Կ. ՊՈԼԻՍ	1852

[illegible] առանց քաշելու ցաւի արհեստական ատամներ [illegible], մէկ անգամէն ամենատարբեր ցաւած ակռաները, ոսկի, ադամանդ և մետաղով լեցնելու, ինչպէս նաև կը դարմանեն բերնի և ակռայի ամէն կերպ ախտերն և կը քաշեն առանց ցաւ զգացնելու։

(Բացի կիրակիէ) ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր. 38

ՌՈՅԱԼ ԷՔՍՉԷՆՃ ԱՍԻՒՐԱՆՍ ՔՕՌՓՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720ԻՆ

Դրամագլուխ աւելի քան	Անգլ. ոսկի 4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է	» 35,000,000

Ընկերութիւնը կ՚ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամէն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ և իցէ ՋԵՂՋԻ կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.
726 Պահճէ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթալ խան։

COMP RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շարժման երթեւեկութիւնք

Բշ. 15/27 Օտէսայի սուրհանդակ, ժամ 3ին յետ միջօրէի։
Գշ. 16/28 Աղեքսանդրիոյ ուղղակի սուրհանդակը ժամ 5ին յետ միջօրէի, Պիրէոսի ճամբով
Դշ. 17/29 Սեվաստոպոլի սուրհանդակ, առաւօտեան ժամ 10ին։
Դշ. 17/ 9 Սուրհանդակ դէպի Փորթ-Սայիտ Նաւահանգիստները մինչեւ Պաթում, առաւօտեան ժամը 11ին։
Եշ. 18/30 Օտէսայի սուրհանդակ, ժամը 2ին յետ միջօրէի։
Ուր. 19/31 Աղեքսանդրիոյ Սուրհանդակ, հանդիպելով Սուրիոյ նաւահանգիստները երկու շաբաթը անգամ մը ժամը 4ին։

ԱԶԴ.— Օգոստ. 16/28, երեքշաբթի օրը Կ. Պոլսէն դէպի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող ուղեւորը Զմիւռնիոյ մէջ պիտի հանդիպին Թրիբոլի, Պէյրութ, Եաֆա եւ Փոր-Սայիտ զացող շոգենաւին։ 605

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

[illegible] Լիվէրպուլէ և [illegible] միջեւ

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ումպրիա	7718	Գազալօնիա	4845
Էդրուրիա	7718	Պօթնիա	4531
Սէրվիա	7391	Սամարիա	3574
Ուրանիա	7268	Մարաթօն	2403
Բաւոնիա	5587	Ալգիաս	2393
Սէֆալոնիա	5517	Սարակոսա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բալմիրա	2144
Ալեբբօ	2143	Թրինիտատ	1899
Քէտար	1876	Մորոկգօ	1855
Շէրպուրկ	1614		

Շէրպուրկ շոգենաւը, Նաւապետ Պաքօն, Լիվրբուլէն հոս պիտի հասնի դէպ ի սեպտեմբեր 2։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ձ. ՃՈԼԻ գործակատար
Thomas C. Joly
Ալիքսիատիս խան, Թիւ 401
Ղալաթիա 932

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվէրպուլէ, Պօրտոյի, Միջերկրականի և Սեւ Ծովի միջեւ բեռնով լուրերով

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ռամսէս	3000	Թիպըր	2500
Անպիս	3000	Նէրթիս	2400
Թէյպըր	3000	Օսայրիս	2250
Քեանոբուս	3000	Բէրա	2250
Ֆարոս	3000	Սֆինքս	2000
Օսմանլի	3000	Կասբըն	1500
Մարիոթիս	2500	Կիւբէն	1500

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ.
Ուիթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
847 31, Ճէյմս Սդրիդ Լիվրբուլ

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ